Universitäts- und Landesbibliothek Bonn

Yovhannow Mamikoneani episkoposi Patmowt'iwn Tarônoy

Yovhan <Mamikonean>

Venetik, 1832

urn:nbn:de:hbz:5:1-11461

Visual Library

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐՕՆՈՅ

Երկրորդ Տպագրութիւն

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1889 ԹՎԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յովհան մամիկոնեան եպիսկոպոս յաւուրս Ներսեսի հայրապետի Շինողին կացեալ, հրամանաւ նորա գրեաց զգիրս զայս։ Յորում պատմէ զպատերազմունս տանն մամիկոնեանց ընդ Պարսս, և զՄուշեղայ և զԳայլ վահանայ, այլովքն հանդերձ. որ ինչ յաւուրս խոսրովու երկրորդի Պարսից արքայի յերկրին Տարօնոյ գործեցան։ Այլ որ ինչ իրք 'ի Տրդատայ մինչև ցխոսրով լեալ են, զոր մատենագիրս 'ի յիշատակարանին իւրում աւանդէ գտեալ 'ի կողմանս Եգեսեայ և թարգմանեալ, չերևին 'ի միջի։

Անդատին 'ի նոցունց օրինակաց գրոցն Զենոբայ և տպագիրս այս արարաւ. առ որ ցանկալի էր մեզ ընտրելագոյն օրինակս 'ի ձեռին ունել։ Զի առաւել ևս 'ի սմա գտանին փոփոխմունք և յաւելուածք. որք եթէ ոչ 'ի գրչագրաց իցեն յետոյ կրճատեալ, ինքն իսկ արդեաք մատենագիրն, կամ յետ նորա Գլակայ վանիցն առաջնորդք յաւելին զայնս ըստ նորին յորդորանացն՝ զոր 'ի

յիշատակարանին իւրում առնէ։ Զի « որք զկնի գոցա, ասէ, այլք նստին վանականք, զոր ինչ գործի յաւուրս նոցա 'ի տանս յայսմիկ՝ դիցէ 'ի նոյն մատեանս »։ Արդ մեր հնգեցունց օրինակաց բաղդատութեամբ՝ անթերի զբնագիրս յերիւրեալ, թողումք այլում տեղւոյ քննել որ ինչ 'ի սմա ըստ ժամանակագրութեան մասին գտանին անտեղութիւնք, և զպատճառս նոցին հետազօտեալ հոլանել։

(1832)

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՄԻԿՈՆԵՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

Եթէ ոչք են, որ յաջորդեցին յառաջնորդութիւն սուրբ Կարապետին, որ կոչի Գլակայ վանք [1]:

Զենոբ եկաց հայր վանացն Գլակայ ամս քսան: Յետ նորա Եպիփան աշակերտն Անտոնի ամս երեսուն: Ի սորա տասն ամին եկն սուրբն Գրիգոր 'ի Գլակայ վանսն, եկաց յԱւետեաց բլուրն առ Անտոն և կրօնիդէս չորս ամիս [2]: Եւ նոքա հանեալ զնա անտի ասելով. Գնա յանապատ յանմարդաբնակ տեղիս, զի մի՛ ոք փառաւորութիւն մատուցանէ քում սրբութեանդ: Իսկ նորա գնացեալ 'ի Մանեայ այրսն, և կացեալ անդ ամս եւթն, վախճանի 'ի կենացս 'ի փառս աստուծոյ:

Ստեփանոս աշակերտ նորա [3] ամս հնգետասան [4]: Ի սորա չորրորդ ամին վախճանեցաւ սուրբն Անտոն. և յետ երկուց ամսոց և սուրբն կրօնիդէս, կացեալ ամս քառասուն յիննակնեան տեղիս. և է սակաւ ինչ հեռագոյն թաղեալ յեկեղեցւոյն ըստ հարաւոյ կուսէ: Սա չինեաց եկեղեցի, ուր սուրբ Գրիգոր զնշխարսն

1 Օրինակ մի. Այս են հարք վանացն Գլակա Իննախնեան պեղեալն յորս է նշխարք սրբոյ Կարապետին Ա Առանաքինի Վայրին:

2 Օրինակ մի երեք ամիս:

3 Օրինակ մի չունի աշակերտ նորա:

4 Յերիս օրինակս ասի:

պահեաց յայն կոյս կուսաց, առ յորդաբուղխ աղբերն. և կացոյց անդ կրօնաւորս վաթսուն հրեշտակային վարուք։

Եփրեմ ամս քսանևութ։

Յովհաննէս ամս տասն [1]. սա էր 'ի ժամանակս սրբոյն Սահակայ։

Ղիմինդոս ամս տասն։

Մարկոս ամս ութևտասն [2]։

Կիւրեղ ամս քսան և երկու։ Սա առաջին եպիսկոպոս ձեռնադրեցաւ 'ի Մանդակունւոյն Յովհաննէ Հայոց կաթողիկոսէ։

Գրիգոր ամս վեց։

Անդրէաս ամս մետասան [3]։

Ներսէս ամս եօթն [4]։

Յովհաննէս ամս երիս [5]։

Սահակ ամս հինգ [6]։

Յովսէփ ամս վեց։

Բարթողիմէոս ամս չորս [7]։

Աթանաս ամս տասն [8]։ Սա էր, որ 'ի ժամանակս Մովսեսի Հայոց կաթողիկոսի զթուականն գրեաց հրամանաւ Նորին 'ի Դուին քաղաքի. զի նա էր աեղեակ տումարի ամենայն ազգաց։

Կոմիտաս ամս ութ [9]։ Սա գնաց միաւորել [10] յԱբրահամէ Հայոց կաթողիկոսէ առ Վրաց կաթուղիկոսն։

Յաեփաննոս ամս վեց։ Սա 'ի ժամանակս Կումիտասայ Հայոց կաթողիկոսի գնաց առ նա, և եբեր մասն ինչ 'ի սրբոց Հռիփսիմեանց, և եդ 'ի Գլակայ վանքն՝ ուր ինքն իսկ էր։ Քանզի Կումիտաս վերսային չինեաց զվկայարան սրբոց Հռիփսիմեանցն։

1 Յերիս օրինակս յիսուն։
2 Յերիս օրինակս Մակար ամս երկոտասան։
3 Յերիս օրինակս ութ. և օրինակ մի յաւելու. Սա գնաց ընդ Վարդանայ Հայոց կաթողիկոսի 'ի ժողովն հոռովմոյ. յորում ամենայն հայք և վիրք և յոյնք առ Զենոնիս կայսերն 'ի Բիւզանդիոն հաստատին և մի բնութիւն խոստովանեցան։
4 Յերիս օր. հինգ։
5 Յերիս օր. երկու։
6 Յերիս օր. եօթն։
7 Յերիս օր. երիս։
8 Յերիս օր. վեցտասան։
9 Յերիս օր. տասն։
10 Օրինակ մի դատորել։

Բարսեղ[1] ամս ութ։

Թադէոս[2] ամս երեսուն։ Սա 'ի աղայութենէ ստացաւ զառաքինութիւն. և էր աշակերտ Բարսղի, որ եղև նմա սիրելի վասն վարուց իւրոց, և իշխանին մամիկոնենից Մուշեղայ. և իշխանն բազմացոյց ամս դասատակերտս բազումս։ Սա բազում կրօնաւորս կարգեաց 'ի Գլակայ վանսն միաճաշակս և ճգնաւորս՝ առանձինն բնակել, անձինս երեք հարեւր ութսուն[3] և ութ։

Արդ 'ի սորա ժամանակս եկին արք չորք 'ի կողմանցն Յունաց, արք ճգնաւորք և խոտաճարակք, որոշեալք յամենայն մարմնական հեշտութեանց, որք կամէին անցանել ընդ Սուկաւ[4]։ Իբրև եկին 'ի տեղիսն յայն, հաճեցան[5] բնակել յանապատ. և կացեալ ամս երկու, լուան ոմանք 'ի կողմանցն Սագաստանաց արք երեք. և եկեալ 'ի նոյն տեղին Գլակայ, և հանդիպեալ միմեանց՝ դադարեցին 'ի միում վայրի։ Ոմանք յիննակնեան վայրսն, յԱւետեաց բլուրն. և ոմանք 'ի քարայրին, որ 'ի հարաւակողմն արևելեան է, 'ի թագուածի խաչի կողմանն. իսկ ոմանք 'ի կողմանց անտառաբլերն։ Եւ այնպէս բազում ժամանակս կեցեալ 'ի սոյն խստակրօնութեան ամս քսան։

Արդ 'ի ժամանակս իշխանութեան մամիկոնենից Մուշեղայ, և թոդկայ վանականութեանն[6], հրաշալի իմն գործեցան գործք 'ի վանսն Գլակայ 'ի դուռն սուրբ կարապետին։ Իշխանն Արծրունեաց, որում անունն կոչիւր Վարդ պատրիկ, սա չինեաց բազում եկեղեցիս և վանորայս. և ունէր կին բարեպաշաճն, Մարիամ անուն նորա։ Սա առեալ զկին իւր էած առ հայրն իւր Մուշեղ, զի ինքն դէմ եդեալ էր գնալ 'ի Կեսարիա։ Եւ թողեալ զկին իւր անդ, և յանձն արարեալ զգաւառն այլոց ազատաց, և ինքն գնաց[7]։ Իսկ կինն նորա յոյժ փափաքեալ էր սրբոցն՝ որ 'ի Գլակայ վանսն և ուխտի

1 Յերիս օրինակս Բարսղիմէոս։
2 Յերիս օրինակս Թադէի սուրբ և ճգնաւոր։
3 Օրինակ մի ինն։
4 Օրինակ մի ի Սուկաս։
5 Օրինակ մի յաւելու հաստանէցան բնակել անդ։
6 Յերիս օրինակսն 'ի հայրապետութեան Թոդկայ։ Իսկ միւս այլ Թոդկայ վանականն։
7 Օրինակ մի յաւելու ի Կեսարիա։

կարապետին։ Յաւուր միում առեալ զփոքրիկ մանկիկն իւր անդրանիկն՝ որ էր յիսատեան [1], գայ բազում յօժարութեամբ 'ի դուռն Կարապետին։ Աղաչէր բազում անգամ զկրօնաւորսն, զի թոյլ տացեն նմա մտանել յեկեղեցին։ Իսկ սպասաւորքն արգելուին զնա [2]. բայց զփոքր մանկիկն Ստեփաննոս առեալ 'ի գրկաց նորա, բերեալ առաջի սեղանոյն երկրպագեցուցին տեառն, և բերեալ ետուն ցմայրն իւր։ Իսկ նորա առեալ՝ սկսաւ արտասուել, և ողբալով ասէ. Վա՛յ ինձ մեղաւորիս, որ զրկեալ եմ 'ի բարեաց. ողբացէք զիս ամենայն կանայք, տեղի տուք արտասուաց իմոց ամենայն ձայնարկուք։ Ծածկեսցեն զիս լերինք, և ողորմեսցին ինձ բլուրք. գազանք եղկեսցեն զիս, և թռչնոց ազգք խիթասցեն ընդիս։ Հրեշտակք ապաշաւեսցեն զանձն իմ, և դևք բուսնեալ յարձակեցան 'ի վերայ իմ։ Ողորմեցարուք ինձ ո՛վ սուրբ սպասաւորք Կարապետիդ, և տուք տանել զիս 'ի տաճար անդր [3]։ Եւ դարձեալ ցմանուկն ասէր. Ո՛վ որդեակ, ընդէ՞ր բաժանեցար 'ի գրկաց իմոց. զիա՞րդ ոչ ողորմեցար մօրս քո. ո՞չ ես ծնայ զքեզ, և ո՞չ ես սնուցի զքեզ. և զիա՞րդ թողեր զիս միայն։

Եւ զայս ասացեալ կնոջն, հանեալ բազում անուշահոտ խունկս տայր սպասաւորացն, և դանձս բազումս 'ի սպաս սուրբ եկեղեցւոյն։ Եւ պատգամն յղէր առ հայրն Թոդիկ, զի առեալ զիրսն՝ և զնա թողցէ 'ի ներս։ Եւ նա ասէ. Ոչ զայդ հրաման առեալ եմք յառաջնոցն, և ոչ իշխեմք առնել. արդ եթէ վասն հաւատոց ես, ընդունելի է քեզ այդ աշխատանքդ։ Արդ մի՛ վասն պատասխանւոյն ձանձրանար 'ի մէնջ, այլ երթ 'ի խաղաղութիւն։ Իսկ նա ասէ. Ոչ այդպէս. այլ եթէ վասն իշխանութեան է, ես ոչ երկնչիմ 'ի ձէնջ. իսկ եթէ վասն թշնամութեան Կարապետին ընդ մեզ, և ո՞չ ինքն 'ի կնոջէ ծնաւ, և տէրն ինքն 'ի կնոջէ է ծնեալ. և ո՞չ առաքեալք և մարգարէքն մայր ունէին։ Արդ ես մտանեմ ո՛վ տէր, և զմայրն քո բարեխօս ունիմ ինձ. մի՛ առներ յիս զցասումն բարկութեան քո, զի մի՛ եղէց նշաւակ

1 Օրինակ մի 'ի սպէան։
2 Օրինակ մի յաւելու յայնմ խորհրդոյ։
3 Օրինակ մի 'ի փառաբեր արքանապէս։

աշխարհի. զի եթէ դու զկնոջ կաթն արբեր, գոնեա և զիս տաճարիս արժանի արա[1]: Եւ զայս ասացեալ՝ ելմուտ 'ի տաճարն, և համբուրեաց զորմ տաճարին. և գնաց առաջի սրբոյ սեղանոյն, և ծունր կրկնեալ՝ ասէ. Տես, տէր, զբեկեալ սիրտ իմ, և ողորմութիւն արա վիրաւորելոյս. զի դու ոչ յիշեցեր յողորմութեան զբարկութիւն քո. արդ օրհնեալ եղիցի անուն քո յաւիտեան:

Եւ իբրև ել անտի տիկինն, խստացին[2] ոխայան և տրտմեցան յոյժ ընդ իրսն սպասաւորք եկեղեցւոյն, և ոչ պատրաստեցին կնոջն կերակուր: Իսկ նորա հրամայեալ սպասաւորաց իւրոց՝ ճաշ առնել կրօնաւորացն, և զամենեսեան 'ի սեղանն կոչել[3]. և էին արք երեք-հարեւր ինեսուն և հինգ: Եւ յորժամ ճաշեցին, ասէ տիկինն. Ո՛վ սրբասէրք և փոյթք յաստուածային մշակութիւնն, ուրախ լերուք ընդ իս 'ի տէր, զի ներեաց ինձ, և կատարեաց զփափաքումն սրտի իմոյ. արդ օրհնեցէք զիս և սփոփեցէք[4] 'ի խաղաղութիւն: Եւ յառաջ ելեալ գնացին:

Իսկ եկեղեցպանն և մի ոմն 'ի կրօնաւորացն գնացեալ առաջի սրբոյ սեղանոյն, ասեն. Ո՛վ տէր, և դուներեաս կնոջն՝ որ զայն գործեաց. և այլ կանանց զնոյն խրամ համարձակեալ հատանեն. արդ արա զնշան քո զօրութեանդ, զի վկայ լինիցի աղգաց, և վկայ և օրէն բաղմաց: Եւ իբրև յուղարկէին զկինն՝ ելանել ընդ փոքր զառ 'ի վերն 'ի հարաւոյ կուսէ վանացն, որ 'ի գլուխ Նարդակայ[5], և հայի 'ի փոքր ամրոցն Մեծամօր ներքոյ Նարդակայ՝ զոր Անդակն[6] կոչեն, ետես կինն 'ի հիւսիսական կողմանէն տեսութիւն զարմանալի. և ընկէց զմանուկն 'ի գայեակն, և ասէ. Տեսանեմ այր մի գիսաւոր ընդ ամպս սրոտացեալ, և ելեալ յեկեղեցւոյն գայ առ իս. տեսանեմ առ նա սուր սրեալ և թացու-

1 Օրինակ մի զիս ընդունիս ի քաճարդ արքանապէս:
2 Յերիս օրինակս խանդացին:
3 Օրինակ մի ջուրնի զթիւ կրօնաւորացն:
4 Օրինակ մի արքաւեցէք:
5 Յերիս օրինակս Սարգակայ:
6 Յօրինակի միում Արդակայ՝ զոր Արդակն կոչէն. իսկ յայլ ջորս օրինական չէք:

ցեալ [1] և յարեան ներկեալ։ Եւ ընդ բանսն եհար զնա, և անդէն սատակեցաւ [2]։ Զոր տեսեալ ծառայիցն, ընթացեալ ազդ առնէին սպասաւորաց եկեղեցւոյն. և հայրն ելեալ բարկացաւ եկեղեցպանին, տրտմեալ յոյժ՝ բազում ժամս արտասուեաց։ Ապա առեալ զսպասաւորսն տարաւ 'ի տեղին, և կազմեալ գերեզման, եդին 'ի նոյն տեղւոջն. և կանգնեաց խաչ քարեայ, և գրեաց 'ի նմա այսպէս.

ՈՐ ՈՋ ՅԱՆԴԳՆԵՍՑԻ ՄԱՐՏՆՁԵԼ,

ԸՆԴ ԵԿԵՂԵՑԻ ԱՍՏՈՒԾՈՑ

ԱՅՍ ՍՈՒՐ ԵՂԻՑԻ ԸՆԴ ՆՄԱ [3]

Եւ հաստատեալ կայ այս գրով 'ի նոյն տեղւոջն։

Իսկ զմանուկն առեալ ետ 'ի դայեակս մինչև յարբունս հասաւ. և ապա առեալ 'ի վանսն ուսոյց զնա, և հաստատեաց զնա հայր վանացն յառաջ քան զմահ իւր [4]։ Իսկ հայր նորա իշխանն Արծրունեաց մինչդեռ գայր 'ի կեսարիոյ, լուեալ զմահ կնոջն, ստրջացաւ. իսկ հայրն թոդիկ մխիթարեաց զնա։ Եւ նա խորհեցաւ շինել եկեղեցիս. բայց գնաց 'ի Մատրավանսն վասն նիւթ գտանելոյ, և անդ շինեաց եկեղեցի վայելուչ, և կոչեաց զանուն նորա վասն կնոջն՝ սուրբ Աստուածածին, և զարդարեաց զնա հրաշալի սպասիւք և կազմութեամբ։ Նոյնպէս և զսուրբ կարապետն 'ի Գլակայ վանսն մեծաշուք փառաւք զարդարեաց։

Սա դարձոյց զկուառսն 'ի կարապետն և զՊարեխ. քանզի իշխան ոմն անօրէն՝ տանն մամիկոնենից՝ կըտրեաց զերկու աւանսն 'ի վանացն, և ետ գուսանի ումեմն կնոջ։ Զոր, բարկացեալ հօրն կիւրղի, անիծեալ զիշխանն վասն կտրելոյ զգիւղսն 'ի վանացն։ Իսկ յետ ամսոյ միոյ 'ի յորս ելեալ, ընկէց զնա երիվարն, և եհան զոգին։ Բայց որդին թէպէտ և ետ զաւանսն, այլ ոչ

1 Յերիս օրինակս բացագրեալ։

2 Օրինակ մի և ընդ բանիցն եհար զնա և անդէն սատակեաց։

3 Օրինակ մի որ ոչ մարգնէի ընդ եղեղեցի սրբոյ Կարապետին անդէնդ ճաւալմ այս սուրս եղիցի նորա հոգւոյն և մարմնոյն, զի ոչ կարէ իշխանուհիսն մարգնէ եալ ընդ սոգոածոյ. ապա եթէ մարգնէիցի՝ կորիցէ որպէս կինս այս։

4 Օրինակ մի չունի յառաջ քան զմահ իւր։

էառ 'ի նմանէ հայրն [1] մինչև 'ի գալ այս իշխանիս։ Արդ այս իշխանս կշռեաց քսանևերկու հազար դահեկան, և ետ իշխանին Տարօնոյ. և գնեաց զկուառս և զՊարեխ, և ետ գնոսա վանացն վճռաւ. և երկու գիւղս յիւր գաւառէն, զԱրտամետ և զգահ իշխանացն [2]։ Իսկ զորդին թողեալ առ Թոդիկ, գնաց 'ի գաւառն իւր. և 'ի վախճանիլն իւր՝ ետ տանել զինքն 'ի վանսն ինն ակնեան, և կայ 'ի կողմ արևելից երեք քայլ հեռագոյն յեկեղեցւոյն։

Ընդ այն ժամանակս սպանին զՈրմիզդ Պարսից արքայն, և Ջամբ խոսրով որդի նորա եկն փախստական 'ի Յոյնս [3]. և կնքեալ Բաղկեդոնի հաւատո

[4], դարձաւ զօրաք 'ի Մօրկայ առ Պարսից գործաւորքն, և զերկիրն իւր առնոյր։ Արդ մինչ 'ի Յունաց գայր խոսրով, առեալ զՄուշեղ զտէրն Մշոյ և խուլթայ Տարօնոյ իշխանն և Սանոյ՝ հրամանաւն Մօրկայ, տարեալ 'ի Դուին, և Հայոց մարզպան հաստատեաց՝ տուեալ 'ի ձեռս նորա զզօրս Հայոց երեսուն հազար. և ինքն առեալ զզօրսն Յունաց եւթանասուն հազար, գնաց 'ի Բահլ Շահաստան [5]։ Եւ ընդ Հայոց զօրսն հպարտացան բնակել [6] Յոյնքն, անցին գնացին աւուր միոյ ճանապարհ [7] 'ի դաստակերտ, և անդ իջին։

1 Օրինակ մի հայր վանացն։
2 Յերիս օրինակս զԱրքամէպ և զԳոմս։
3 Յերիս օրինակս 'ի Հռոմ։
4 Զայս և Յովհաննէս կաթողիկոս գրէ յիւրում պատմութեանն այսպէս. « Բայց մինչ դեռ կենդանի էր սուրբ հայրապետն Մովսէս, խոսրով որդի Կաւատայ արքայի Պարսից, յետ բազում մարտից աբուրեանց և քաջուրեանց, և տիրելոյ ազգաց բազմաց, ըստ ծագման նշուլից ատուածային լուսոյն 'ի սիրտ նորա՝ 'ի ժամ վախճանի իւրոյ հաւատացեալ յաստուած Ճշմարիտ, և յորդի նորա միածին, և 'ի հոգին սուրբ աստուծոյ. և անարգեալ 'ի բաց զկռամոլ ամբարշտութիւնն, խոստովան եղև՝ թէ ոչ գոյ այլ աստուած բաց 'ի միոյն միայն, զոր քրիստոնեայք պաշտեն։ Եւ ապա աւազանին սրբոյ վերատին ծննդեան լուսաւորութեամբ հաղորդի կենդանարար մարմնոյ և արեանն տեառն։ Եւ ողջունեալ զսուրբ աւետարանն Քրիստոսի համբուրմամբ, յետ երից աւուրց վախճանի 'ի բարուք ծերութեան։ Եւ բարձեալ զմարմին նորա քրիստոնէից նուիրական սաղմոսերգութեամբ և քահանայական դասու, տարեալ դնեն 'ի շիրիմն թագաւորացն։
5 Յերիս օրինակս գնացին 'ի Բալխասպան։
6 Օրինակ մի բանալիլ։
7 Օրինակ մի գնացին ասուր գնացիք։

Իսկ Նիխորճէս, որ զՈրմիզդ եսպան, գումարեալ զզօրս Պարսից ութսուն հազար, և եկն 'ի վերայ Մուշեղայ։ Իսկ քաջն Մուշեղ քաջալերեալ զզօրսն, հազիւ հաւանեցոյց մտանել 'ի պատերազմն [1]։ Եդ բանս 'ի բերան Հայոց զօրացն Մուշեղ իշխանն Մամիկոնենից և Հայոց մարզպան, 'ի բարեխօս և 'ի յօգնութիւն զսուրբ Կարապետն կոչել. և միաբան [2] զայս բան ասացեալ, յարձակեցան 'ի վերայ զօրացն Պարսից. և ետ տէր 'ի ձեռս նոցա զթշնամին։ Զոր գիտացեալ Մուշեղայ՝ թէ նա է թագաւորն, նմա մատեաւ. և սկսան բախել իրերաց։ Զոր վաստակեցաւ յոյժ [3] Մուշեղ. սակայն զմահ և զկեանս առաջի եդեալ, բարձեալ զմուրճն 'ի վեր՝ ի ջոյց 'ի վերայ գագաթանն Նիխորճիշի, և ուղեղն ցնդեալ ընդ քիթսն ի ջանէր։ Եւ կտրեաց զգլուխն, և ձգեաց 'ի մախաղն իւր. և յորդորեալ զզօրսն 'ի պատերազմն, և զօրացեալ զօրացն, առաջի եդեալ զնոսա 'ի փախուստ. և կալան 'ի նոցանէ քառասուն և ութ իշխան կենդանւոյն. և համար կոտորածոյն ոչ երևէր, վասն բազմութեանն։ Իսկ արս հազար ընդ իշխանացն ըմբռնեալ, և մեծաւ յաղթութեամբ դարձաւ 'ի պատերազմէն։

Եւ իբրև ազդ եղև առ թագաւորն խոսրով, և խնդաց յոյժ. իսկ զօրքն ցունաց տրամեցան սաստիկ ամօթով։ Իբրև կոչեաց թագաւորն զՄուշեղ, և պատրաստեցաւ տալ պարգևս ամենայն զօրացն, յղեաց առ խոսրով՝ արքայն Մօրիկ, քանզի զնա թագաւորին փոխարէն էին կացուցեալ. Եթէ գիտէս դու զայդ, որ արքայի մահու սպառնայ Մուշեղ։ Իսկ նա խորհեցաւ դարան մահու գործել նմա, և արձակեաց կոչել առ ինքն զՄուշեղ. և քոյր խոսրովու իմացեալ, ազդ արար Մուշեղայ զնեղութիւն եղբօրն։ Իսկ Մուշեղայ առեալ ընդ իւր քառասուն իշխան, առանց այլ ուրուք, կազմեցան զօրէն պատերազմի. և սուսեր պատերազմի ընդ մէջ ածեալ,

1 Օրինակ մի յաւելու. Ե իբրև ճակատեցան Ե խմբեցաւ պատերազմն, եդ բանս։

2 Օրինակ մի գրէէ մինչեան զայս բան ասացեալ ԵՆ սուրբ Կարապետ հաս մեզ յօգնականիւն. Ե յարձակեցան։

3 Օրինակ մի որ յոյժ վաստակեցաւ։

այնպէս եկին առ թագաւորն։ Եւ եկեալ երիվարքն մինչև 'ի դուռն խորանին, և ամենայն խստութեամբ տուեալ պատասխանի, և 'ի լոյս ածեալ զմահու դարանն, թքակոծեցին զնա, և զանմտութիւն նորա պարսաւեցին. և յարուցեալ մեծաւ բարկութեամբ իշխանքն հանդերձ, ել 'ի թագաւորէն։ Իբրև լուաւ զայն թագաւորն՝ երկեաւ, քանզի մանուկ էր։

Իսկ իշխանն Մուշեղ արձակեաց առ ցունաց զօրավարն, և ասէ. Կամեցայք դուք սպանանել զիս նենգութեամբ, արդ մի՛ զարթուցանէք զառեւծ՝ որ 'ի քուն է, և մի՛ զգայլ՝ որ զիւր բարսն մոռացեալ է. ապա թէ ոչ, այն որ զուլթսուն հազարսն յաղթահարեաց, կարող է և զեւթանասուն հազարսն սատակել։ Եւ ինքն թողեալ զզօրսն 'ի Դուին, 'ի բաց եկաց 'ի մարզպանութենէն. և առեալ զզօրս իւր, որ 'ի մամիկոնեան տանէն էին, եկն 'ի գաւառ իւր։ Եւ յետ սակաւ ամաց եսպան փոկաս զՄօրիկ, և ինքն նստաւ յաթոռ նորա։

Իսկ Խոսրով գնացեալ վրէժխնդիր Մօրկայ, և եկեալ անցանէր ընդ Կարնոյ քաղաքն. և արձակէ առ Մուշեղ իշխանն Տարօնոյ պատգամս, և ասէ. Արի ընդ իս 'ի դուռն թագաւորին ցունաց, լինել վրէժխնդիր Մօրկայ մահուանն. ապա թէ ոչ, 'ի դառնալն իմ՝ զերկիրդ քանդեմ, և զքեզ կապանօք տանիմ 'ի դուռն արքունի, կնաւ և որդեօք։ Իսկ նա ոչ ինչ յղեաց պատասխանի առ նա, այլ սկսաւ ամրացուցանել զգաւառն։ Եւ իբրև գնաց Խոսրով, էառ աւար և գերութիւն յերկրէն ցունաց. և անցեալ գնաց 'ի կողմանս Բասենոյ, 'ի Դբուին և 'ի Հեր և 'ի Բահլ։ Բայց յորժամ եկին 'ի Կարին, առաքեաց Խոսրով զՄիհրան 'ի Տարօն առ Մուշեղ իշխանն, զի կալցէ զնա և տարցէ 'ի պարսիկս։ Եւ հրամանն տուեալ, զտեղիսն՝ յորս նա զհաւատան ունէր՝ [1] կործանել, և զկրօնաւորսն սպանանել. որոց եկեալ, զիրան կատարէին։

1 Ցերկուս օրինակս զտեղիսն, զոր նա հաստատ ունէր. և յայլսում հաստատէր։

ԳԼՈՒԽ Բ.

Պատմութիւն Պարսից. և գալն Միհրանայ 'ի Տարօն երեսուն հազարաւ, և կոտորելն զնոսա Գայլուն Վահանայ յԱՃ քաղաքի. և դառնալն առ Միհրան աէրն Մշու, Գաշէրայ, Խուրթայ, Շատխոյ, և Սասնոյ։

Յառաջին ամին թագաւորութեանն Փոկասու, յորժամ սպանաւ Մօրիկ արքայ դաւով 'ի ծառայէ իւրմէ՝ որ և նստաւ յաթոռ նորա, յիշեաց Խոսրով զուխտն Մօրկայ՝ որ 'ի մէջ նորա և իւրն, և եկն էանց 'ի Յոյնս չորեքտասան բիւրօք. և բրեաց բազում աւանս և գաւառս, և դարձաւ։ Իսկ զՄիհրան քեռորդին իւր առաքեաց 'ի Տարօն երեսուն հազարաւ։ Եւ իբրև եկն նա 'ի գաւառն Հաշտենից, կալեալ զոմն առաջնորդ իւրեանց՝ անցեալ եկին մինչև յԱրձանն քարեայ։ Իբրև ընթերցան զդիր արձանին, խորտակեցին զնա. և ինքեանք ութ հազար այր անցին 'ի Մեղտի և յԱստեղունս[1] ամրոցն. իսկ քսանևերկու հազարն դեռ յԱրձան անդր կային, դիտելով զփախստականսն։ Իբրև գիտացին արքն եւթն, որք խոտաճարակքն էին, եկին 'ի վանսն, և զամենեսեան փախուցին զկրօնաւորսն։ Ոմանք փախեան, և ոմանք մնացին. բայց Պօղիկարպոս զամենեսեան յուզարկեաց յամուրն Ողկան, և 'ի տեղւոջն ըզհայրն միայն զԹոդիկ արգել, և զսպասաւորսն եկեղեցւոյն. և հրամայեաց սպասաւորացն՝ տէրունական մարմնոյն կազմել զանձինս։ Իբրև մատուցին զպատարագն եւթանեքին խոտաճարակքն, և հրամայեցին նշանագրի միւսմ՝ որ եկեալ էր 'ի Յունաց՝ գրել զառ յինքեանց ասացեալսն. և ինքեանք տարածեալ զձեռս իւրեանց առաջի սուրբ սեղանոյն, և ասեն այսպէս.

Տէր աստուած զօրութեանց և արարիչ յաւիտենից, որ ստեղծեր զմարդն 'ի պատկեր քո բարերարութեանդ, և կացուցեր զնա իշխան 'ի վերայ երկրի. և ետուր նմա զփառս և զպատիւ յաւիտենական անմահ։ Ուստի նա-

1 Յերիս օրինակս յԱստեղունս։

խանձեալ բանսարկուին՝ մոին մեղք յաշխարհս, և 'ի մեղաց անաի մոռացումն, և 'ի մոռացմանէն կորուստ յաւիտենական. ուստի զորդէգրութիւնն, որ յաստուծոյ էր, ջնջեցաք մեղացն ապականութեամբ. ուստի փրկութեան ճանապարհն բարձեալ էր, և մահ թագաւորեալ։ Այլ դու, տէր, գթացար 'ի ստեղծուածս քո աստուածային ձեռացդ. առաքեցեր զմիածին Որդիդ քո 'ի փրկութիւն աշխարհի, որ եկն և եղև մարդ 'ի կնոջէ 'ի մեր նմանութիւնս, և էառ զմեր պատժապարտութիւնս. դատապարտեաց զմեզս մարմնով իւրով, ելոյծ զանէծս նախաստեղծին Ադամայ։ Եբարձ զապականութիւն մարմնոյն 'ի գերեզմանի, և իշխան գոլով 'ի վերայ մահու՝ զմահ գերեաց, և զդժոխս աւերեաց. զարգելեալսն ազատեաց, և ճանապարհս յերկինս ուղղեաց, առաջնորդելով ամենեցուն յառաջին յանմահական տեղիսն։ Զայս ամենայն արարեալ, և զմարմին իւր ետ հաւատացելոց 'ի կերակուր, և զարիւն իւր ըմպելի, և զմահ նորա պատմել ամենայն հաւատացելոց։ Եւ վասն անուան նորա զմահ առ ոչինչ համարելով՝ զանձինս իւրեանց մատնեցին տանջանաց և մահու, փոխարինի ակն ունելով 'ի միածնէ Որդւոյ քո, փառաւորելով զամենեցունց Հայր սուրբ։

Այսօր և մեք զանձինս մեր 'ի մահ մատնեմք և չարչարանաց և վշտի. այլ և վասն խոստմանդ, թէ որ ճանաչեն զիս՝ 'ի հալածանս կայցեն, զի « Ուր եմն եմ, ասէ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի ». և գիտեմք, տէր, զի ոչ անտես առնես զաղաչանս մեր, և ոչ ընդ վայր հարկանես զանձինս ծառայից քոց։ Ցուր, տէր, փառս անուանդ քո վասն աքանչելեաց քոց, զորս ցուցանես առ փառաւորիչս անուանդ քո յաղգաց և յաւիտեանց։ Մի տար օտարոտից [1] զբնակութիւն սիրելեաց քոց անհաւատիցն ժառանգել. և մի մեծաբանեսցեն հեթանոսք՝ թէ կործանեցաւ տեղի փրկութեան նոցա, և ոչ ոք է՝ որ օգնէ նոցա. և ուր է տէր աստուած նոցա՝ յոր յուսացեալն էին։ Ցիշեա, տէր, զգինս արեան քո, և փրկեա 'ի ձեռաց նեղչաց զհաւատացեալս անուանդ քո.

1 Օրինակ մի օտարոտի։

զի ծանիցեն ազգք հեռաւորք զմեծութիւն քո, և յու-
սասցին յանուն քո ամենեքեան, որք երկիւղիւ ծառա-
յեսցեն մեծութեան քո։ Ամրացո, տէր, զժողովուրդս
քո, հովուեա և բարձրացո մինչև յաւիտեան. պարըս-
պեա, տէր, խնամատար ալովդ զոր փրկեցեր պատուա-
կան խաչիւդ քով, տալով օգնական 'ի նեղութեանս 'ի
դէպ ժամանակի։ Զգեա, տէր, զամրաձաձուկ ալ քո 'ի
վերայ բանաւոր փարախիս այսորիկ, և մի տար զժառան-
գութիւնս քո բնակութիւն անհաւատից [1]. եղիցի ձեռն
քո 'ի զօրացուցանել զհաւատացեալսն, և որք դաւա-
նեն և խոստովանին զանուն քո առալի ազգաց անօ-
րինաց։ Ցուր, տէր, մասն ժառանգութեան անձանց
մերոց 'ի վերինն Երուսաղէմ. զի վասն քո մեռանիմք
զօր հանապազ, և զանձինս մեր վասն քո անբաւ և ան-
չափ մարդասիրութեանդ 'ի մահ մատնեմք։ Զայլ ինչ
ոչ ունիմք պարտուց վճարումն, բայց յաչխարհի ատ
նեղութիւն ունիմք [2]։

Լուր, տէր, ձայնից մերոց, և խոնարհեցո զունկն քո
'ի մաղթանս ծառայից, բարեխօսութեամբ քո Կարա-
պետիս և Մկրտչիս. և սորին ճգնութեամբս պահեա
զեկեղեցիս հաւատացելոց անսասանելի և անդրդուելի,
զի հաստատուն կացցէ հիմն հաւատոյս մերոյ 'ի վերայ
հիման առաքելոց և մարգարէից [3] խոստովանութեանն,
մինչև երևեսցի արդար դատաստանն համօրէն աշխար-
հի։ Երևեսցի փառք քո, տէր, 'ի տաճարս յայս՝ զոր ընտ-
րեցեր հիմնարկութեամբ սրբոյն Գրիգորի, և բնակու-
թեամբ սրբոյ Կարապետիս. և կացցէ [4] փառք սուրբ
երրորդութեանն 'ի տեղի ատ։ Քանզի սա է դուռն
դժոխոց, և կապանք [5] մահու. իսկ այժմ 'ի սմանէ մահ
սարտուցեալ, երկնչի մերձենալ չարութեամբ առ հա-
ւատացեալս։ Ի սմանէ և դևք պատկառեցան, և մի
դժրեսցեն զսպասաւորք սորա, և որք գայցեն 'ի սմա։
Զբազմութիւն գիւացն կապեսցես 'ի տեղւոջս յայսմիկ,

1 Օրինակ մի Ե մէ փոր ի բնակութիւն քո անհաւատից մտանել։
2 Օրինակ մի կրէլ։
3 Օրինակ մի առաքելոյն և մարգարէիցն։
4 Օրինակ մի յաւելու և հաստէ։
5 Օրինակ մի կապարանք։

զի խթեսցեն զծուլայեալսն յաստուածպաշտութենէ. բայց մի տացես նոցա իշխանութիւն՝ ըստ իւրեանց լըրբութեանն յարձակիլ 'ի վերայ հաւատացելոց։ Եղիցի և որք հաւատովք յիշեսցեն զանուն սուրբ եկեղեցւոյս 'ի նեղութեան իւրեանց կամ 'ի վիշտս կամ 'ի ցանկութիւն չարեաց կամ 'ի լկումն կամ 'ի գետավիժութիւն կամ 'ի գազանաց բեկումն կամ 'ի վիհս անհնարս որոգայթից, դու տէր աստուած մեր լուիցես նոցա, և զերծուսցես զնոսա յարժանահաս չարեաց անտի. քանզի քո արարածք են և գինք արեան։ Մի վասն մեղաց նոցա դատեսցես[1] զնոսա, և վասն անօրէնութեան նոցա պատժապարտեսցես զնոսա. այլ գթութեամբ քով խրատեա, որ անոխակալդ ես և ամենեցուն մատակարար ըստ իւրաքանչիւր պիտոյից։

Ցիշեա զորս արեամբ քով գնեցեր, և մահուամբ քով որդեգիրս արարեր. մի եղիցի իշխան'ի վերայ հօտի քո, և ապաստանիչ ժառանգութեան վերին Սիօնի։ Տուր, տէր, շնորհս բնակչաց սորա՝ որք պանդխտութեամբ կենաց գնան 'ի կեանս յայսոսիկ, և ոչ ըստ մարմնոյ գրգռեաց, և զմիտս իւրեանց յերկիւղ քո ունիցին. թող զմեղս նոցա, ջնջեա զյանցանս նոցա, բարեխոսութեամբ սրբոյ Կարապետիս. և հեղմամբ արեան սորա՝ գրեա զնոսա 'ի գպրութիւնն կենաց 'ի վիճակս արդարոց քոց։ Այժ աղաչեմք. եթէ մեղք մեծամեծք իցեն, 'ի կալ առաջի սրբոյ եկեղեցւոյս, և ունելով բարեխօս զհեղումն արեան սրբոյ Կարապետիս, և զմեր նահատակութիւն տառապանաց, հաշտեաց ընդ նոսա մարդասիրութեամբ քով։ Մի անտես առներ զաղաչանս մեր, զի դու վասն մեղաւորաց իջեր յերկնից, որպէս ասացեր. « Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս »։ Արդ վասն մեղաւորաց աղաչեմք, և ոչ վասն արդարոց. զմեղաւորաց թող զմեղս, զհիւանդաց առողջացո զվէրս. և որք ապաւինեցան 'ի կենդանութեան իւրեանց, և գործեցին զբարիս 'ի սուրբ եկեղեցիս, և որք սատարեսցին[2] սրբոյ Կարապետիս և կրօնաւորացս և բազում

1 Օրինակ մի դատես... պատժապարտես։
2 Ի միւմ օրինակի սատարեսցեն։

մեղս գործեալ իցեն, և առատաձեռնին 'ի մեղաւոր ընչից իւրեանց սրբոյ Կարապետիս, նոյն ինքս Կարապետս լիցի փոխատու փոխանակ ապականացու ողորմութեանն ըստ հաւատոյ [1] նոցա զպարտիս իւրեանց. մատակարարեա 'ի նոսա առատապէս զթողութիւն մեղաց։ Մնասցէ զօրութիւն աջոյ քո 'ի վերայ վիմիս այսորիկ, որպէս յառաջ հիմնարկեցաւ քո զօրութեամբդ, նոյնպէս կացցէ մինչև գաս 'ի նորոգել զերկիր։ Յայնմ աւուր գոցես զսա նորոգ և անապական որպէս զխորանն 'ի հնումն, զի դու կարող ես յամենայնի. և ըզմեր մահս ընկալ, և յամենայն արարածոց քեզ փառք յաւիտեանս։

Եւ յասել զամէնն, եկն ձայն յերկնից՝ որ ասէր. Եղիցի ձեզ որպէս և կամիքդ. և որք վասն անուան իմոյ և Կարապետիս պանդխտացին, հատուցից նոցա 'ի գալստեան իմում, և զմեղս թողից նոցա. վասն զի մարդասէր եմ առ ամենեսեան. դարձեալ և դուք եկայք 'ի տեղիսն լուսեղէնս, զոր պատրաստեցիք ճգնութեամբ ձերով։ Եւ լուեալ սրբոցն, երկիր պագին առաջի սրբոյ սեղանոյն, և ելեալ արտաքս։ Եւ գնաց Պօղիկարպոս առաջի սրբոյ խաչին, և անդ սկսաւ աղօթել և աղաչել զաստուած վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, և զեկեալ թշնամին խորտակելոյ, և աղքատաց մնալ 'ի տեղիս իւրեանց։ Եւ յանկարծակի հասին զօրքն Պարսից. իբրև տեսին զՊօղիկարպոս, վազվազակի հատին զպարանոց նորա և ընկեցին առաջի խաչին։ Եւ ինքեանք փութապէս եկին մինչև 'ի դուռն եկեղեցւոյն, և տեսին զկրօնաւորսն յարտասուս և յաղօթս պարապեալ. և յարձակեալ 'ի վերայ զեւթանեքեանն կոտորեցին։ Որոց անուանքն են այսոքիկ. Թէոդիսաս, Պօղիկարպոս, Սիմէօն, Յոհաննէս, Եպիփան, Դիմաեիոս, Ենարկիոս [2]։ Սոքա եւթանեքեան կատարեցան 'ի զօրացն Պարսից Միհրանայ, յամսեանն քաղոց՝ որ օր չորրորդ [3] էր, յաւուր հինգշաբաթի յիններորդ ժամու. և ինքեանք մնացին 'ի տեղին մինչև յառաւօտն [4]։

1 Օրինակ մի ողորմութեանն հապա նոցա։
2 Յերկուս օրինակս Նարէոս։
3 Օրինակ մի Եէրորդ։
4 Օրինակ մի յաւելու պարոնիյն։

Բայց զդուռն եկեղեցւոյն ոչ կարացին գտանել, զի ծածկեաց տէր 'ի նոցանէ. և սկսան մրճոք հարկանել, և ոչ գտին։ Եւ զարհուրեալք 'ի դիւաց՝ փախեան 'ի տեղւոջէն, զի գիշեր էր [1]. և մարմինք սրբոյն անկեալ կային 'ի տեղւոջն զերիս աւուրս անթաղ, քանզի փախեան ամենեքեան։ Եւ յետ երից աւուրց եկին սպասաւորք եկեղեցւոյն, և հայրն Թոդիկ· և տեսեալ զնոսա՝ զի վախճանեալ էին, յարտասուս եղեալ՝ տրտմեցան յոյժ։ Ապա առեալ զնշխարս նոցա իջուցին 'ի կողմն հարաւոյ 'ի մէջ դրախտին, և անդ փորեցին զերկիր, և իջուցին զնոսա 'ի գերեզման առ Անտոն և Կրօնիդէս, որք զկնի սրբոյն Գրիգորի ելեալ էին 'ի Կեսարիոյ. և կանգնեալ նշան տէրունական 'ի վերայ նոցա, բազմաց բժշկութիւն լինէր 'ի տեղւոջն։

Իսկ ոմանք հասեալք 'ի Մուշեղայ իշխանէն՝ տեղեկանալ վասն զօրացն, իբրև տեսին զնոսա կոտորեալս՝ հիացան. և փութանակի երթեալ պատմեցին զիրան իշխանին Մուշեղայ։ Եւ նորա լուեալ, զաւուրս երիս իբրև զմեռեալս գնէր անխօս։ Իսկ զօրքն մատուցին նը-մա թուղթ քրիստոնէական օրինաք և մխիթարութեամբ, ասելով. Ճշմարիտ շառաւեղ երանելի յուսոյն, երջանիկ առաքարապետ, մի տրտմիր [2] վասն նոցա. զի աղօթիւք իւրեանց՝ ամուր աշտարակ եղեն աշխարհի, բարեխօսք և օգնականք մեզ առ աստուած։ Բայց դու առաւել գոհութիւն մատո աստուծոյ, որ 'ի քում ժամանակի յայնքան աստիճան առաքինութեան հասին, և հանգըստեամբ փոխեցան առ աստուած մարտիրոսական մահուամբ յաշխատութենէ 'ի հանգիստ, 'ի խոտաբուտ կենաց 'ի դրախտն փափկութեան, և մեզ միշտ բարեխօսք։ Արդ արի սթափեաց և զեկեալդ 'ի վերայ մեր զՄիհրան յուզարկեսցես [3]։ Իսկ նորա սրպէս 'ի քնոյ զարթուցեալ, հրամայեաց կոչել առ ինքն զվահան, զոր իշխան էր արարեալ զնա Տարօնոյ մինչ ինքն Հայոց մարզպան եղև։ Եւ ասէ ցնա. Որդեակ Վահան, դու

1 Օրինակ մի 'ի գեղջոջէն գիշերով։
2 Օրինակ մի՝ մի երկմտեր։
3 Օրինակ մի զնոսա յԱռաքելոցդ Բող Ա գէս զելիեալդ 'ի վերայ մեր զՄեհրան ինչ ուղարկեսցես։

գիտես զաւուրս կենաց իմոց, զի այս հարեւր և քսան ամ է՝ որ ես պատերազմ եմ մղեալ, և սլաքով եմ սրբեալ զարիւնն 'ի ճակատէս[1] փոխանակ քրտանցն. ուխտաւորներք ռազմ[2] անձամբ իմով եմ կարգեալ և մղեալ[3]: Եւ այժմ ծեր եմ և դողդոջոտ, և օգնական իմ աստուած է և դու, և ոչ այլ ոք. զի որդին իմ մեռաւ երկոտասանամեայ[4]: Եւ արդ, որդեակ, դիր զայս 'ի մտի քում. զի եթէ 'ի վերայ քրիստոնէից մեռանիս և եկեղեցւոյ, մարտիրոս ես. իսկ եթէ 'ի վերայ մարմնաւոր ընչից իշանես 'ի մարտ, և այն քաջութեամբ է. զի ես այլ ժառանգ ոչ ունիմ, և երկիրս քեզ եղիցի, և զաւակի քում յետ քո: Արդ արի և գնա, և իմաստութեամբ որսա զնա, և սուրբ կարապետն եղիցի քեզ օգնական և պարիսպ, և աղօթք սուրբ կրօնաւորացն յաջմէ և յահեկէ[5]:

Իսկ Վահան յանձին կալեալ զիրսն, սկսաւ դեսպանս կազմել և առ նա յուղարկել, զի հաշտեսցի և գնասցէ: Իսկ նա ասէ. Ոչ, այլ մինչև զիշխանն Մուշեղ ոչ կալեալ տանիմ 'ի պարսիկս առ արքայն, ոչ գնամ ասի: Իսկ Վահան արձակեալ, ասէ. Եթէ զերկիրս ինձ տաս տէրութեամբ և իշխանութեամբ, ես տաց զիշխանն Մուշեղ 'ի ձեռս քո. և ես ինքն առ քեզ գամ՝ ապրստամբութեամբ 'ի նմանէ, և հատանեմ զերկիւղ 'ի պատեհութեան: Եւ նորա արձակեալ կոչեաց, քանզի յօժար էր իրացն. և ինքն իշանէր 'ի Մուշն աւանի, և Մուշեղն յամուրն Ողկան:

Արդ այն զօրքն, որք զկրօնաւորան կոտորեցին, անցեալ գնացին յԱստղօն ամրոցն[6]. կացին աւուրս երկու, և ոչ ինչ կարացին առնել. ապա գնացին առ Միհրան, և մատուցին զամենայն ձև ամրոցին[7]: Իսկ իբրև եկն Վահան առ Միհրանի, և նա խնդրեաց 'ի նմանէ

1 Օրինակ մի մղէլ, և զարիւնն 'ի ճակատէս սրբէալ փոխանակ քրտանց:
2 Օրինակ մի Էսրնանասուն և երէք պատերազմ:
3 Օրինակ մի յաղթեալ:
4 Յերիս օրինակս երկոտասան ամ է:
5 Օրինակ մի չուն զվերջին հատուածդ և պարիսպ... յահեկէն:
6 Ի միում օրինակի յԱստղեղն ամրոցն. յայլում յԱստղեղնս ամրոցն, որպէս և 'ի ստորև:
7 Օրինակ մի և ծանուցին վասն ամրոցին:

զԱստղենս, և Վահան ասէ. Ոչ այդպէս, տէր. այլ տուր 'ի ձեռս իմ չորեք հազար այր, որ գնամք 'ի վերայ ամուր բերդիցն՝ ուր մտերիմքն նորա են և գանձքն. գուցէ բռնացեալ՝ ոչ տայցեն 'ի ձեռս իմ, ապստամբ զիս կարծելով. այլ այժմ երթիցուք նախ յՕձ քաղաք, և ապա յայլ ուրեք։ Իսկ Միհրան տուեալ 'ի ձեռս նորա չորս հազար ընտիր առնձիոյ, և նորա առեալ տանէր մինչև 'ի դուռն Օձ քաղաքին. և 'ի ներքս նենգութեամբ դարան մահու գործեալ՝ 'ի ձեռս գալ զօրացն։ Եւ առ վաղիւն բանս արարեալ քաղաքին 'ի ներքս առնուլ ըզզօրսն Պարսից. և քանզի նուրբ էր մուտ քաղաքին, սակաւ սակաւ կարէին մտանել 'ի ներքս. և որք ընդ դուռն յայնկոյս անցանէին, զայնս 'ի տունս արկեալ՝ 'ի զգեստիցն կողոպտէին, և զգլուխսն կտրէին. և արտաքոյ պարսպին յաներևան տեղիսն 'ի խորան ընուին։ Եւ 'ի չորեքհազարէն յիսուն այր թողեալ էր 'ի Խարձ[1] կոչեցեալ գեւղն. և նշան տուեալ էր, թէ յորժամ զոք 'ի ձեզ յուղարկեմ, 'ի Միհրան գնացէք, և այլ զօրս ածէք։ Եւ այնպէս արարեալ, և յղեաց՝ թէ այլ զօրս տուր։ Եւ նոքա դարձան առ Միհրան, և առին 'ի նմանէ երկու հազար այր ընտիր, և եկին առ Վահան. և նա այնպիսի գործ հնարեաց, զոր ոչ կարացին գիտել պարսիկքն։

Արդ յորժամ եկին 'ի դուռն Մօրացն, Վահան զՊարսից զօրաց զերիվարսն և զհանդերձսն տուեալ էր քաղաքացեացն. 'ի դուռն կոչեաց զնոսա, և ետ խրատ՝ թէ յորժամ նոքա 'ի ձեզ հային, դուք միաբան 'ի քաղաքն դարձէք, և 'ի ներս մտեալ՝ զյաղթութեան փողն հնչեցուցէք. և զդուռն քաղաքին 'ի բաց թողէք, զի նոքա կարծիցեն՝ թէ առին[2] զքաղաքն։ Եւ արարին այնպէս։ Արդ իբրև տեսին պարսիկքն՝ զի դիմեցին նոքա միաբան 'ի քաղաքն, խնդացին յոյժ. և դիմեցին նոքա ևս 'ի քաղաքն, և սկսան մտանել։ Իսկ Վահան փութով ընդ առաջ եկեալ զօրացն, աւետիս տայր. և քան այր 'ի պարսիկ զօրացն աւետաւորս առաքէր առ Միհ-

1 Յերկուս օրինակս 'Ի Հարցս։
2 Օրինակ մի առաւ։

բան, թէ առաք զքաղաքն [1]. և ինքն դարձաւ զհետ Պարսից զօրացն։ Եւ իբրև բաղումք մտին 'ի քաղաքն, և այլքն դեռ մտանէին, սկսան կասկած առնուլ զիրացն, և կամէին յետս դառնալ։ Իսկ Վահան զհետ մտեալ, սկսաւ կոտորել, և 'ի մօրսն ընուլ. և ինքն ասաի, և քաղաքացիքն անտի քառասուն այր մօրահեղձ արարին. և զայլսն 'ի քաղաքն արդելեալ, կտրել տայր զգլուխսն. և 'ի պարիսպն հանէին։ Եւ արարեալ համար յաւուր յայնմիկ, դտին զգլուխս վեց հազար, պակաս երկու։ Եւ հրամայեաց զամենեցուն զքիթսն կտրել և զթըլփատսն, և արկանել 'ի մախաղ։

Եւ ինքն առեալ զզօրս իւր արս եւթնհարեւր, եկն 'ի Մուշն աւան. և երեքհարեւր այր թողեալ յանցս Մեղուայ [2], և երկու հարեւր այր աշտենաւոր թողեալ 'ի Սանասայ 'ի Ծծմակն [3], և ինքն երկու հարեւր այր առեալ ընդ իւր, եկն առ Միհրան. և մտեալ 'ի սենեակն, խօսեցաւ ընդ նմա այսպէս և ասէ. Ես փախըստական եկի 'ի քո զօրացն առ քեզ. զի ոչ 'ի քաղաքն թողին զիս, և ոչ աւարամասն ետուն մեզ. այլ և զիմ զօրսն 'ի քաղաքն արդելին, և ես փախստական գամ։ Իսկ Միհրան խորհեցաւ հազար այր արձակել 'ի վերայ նոցա. և Վահան ասէ. Եւ 'ի քէն իսկ ապստամբեալ են. քանզի զաւար քաղաքին և զկապուտն առեալ, և կամին 'ի Ցոյնս անցանել։ Իսկ Միհրանայ առաւել բարկացեալ, հրամայեաց երկու հազար այր արձակել 'ի վերայ նոցա. և Վահան խրատ տայր զօրացն՝ 'ի գիշերի մի անցանել ընդ դեռ Մեղտեայ, այլ ինչանս առնել, և 'ի վաղիւն ապա գնալ. Գուցէ ոք թշնամի, ասէ, յարձակիցի. և դուք չէք ընդել վայրուցն։ Եւ ասէ ցնոսա. Հազար այր գնացէք ընդ Ծծմակն [4], և հազար ընդ դաշտն։ Եւ տուեալ նոցա առաջնորդ, և ինքն եկ 'ի Միհրանայ, գնաց յուղարկել զնոսա։ Եւ իբրև գնացին յայն տեղին՝ ուր բաժանել հրամայեաց, առաքեաց հա-

1 Օրինակ մի յաւելու իբրև դարձան առէքառորդն և ինքն դարձաւ։

2 Ցերկուս օրիրակս Մէղտէայ։

3 Ցերկուս օրինակս էրիոս հարիւր այր աշտենաւորս 'ի Սասանայ ցեղէն թողայր 'ի Ծմակն։ Եւ միւս այլ է Սարասանայ։

4 Ցերկուս օրինակս դարձեալ 'ի Ծմակն, որպէս և 'ի սաորև։

բեւր այր ընդ նոսա՝ որ ընդ Ծծմակն գնացին. և ինքն հարեւր այր առեալ, գնաց զկնի նոցա։

Եւ իբրև գնացին յեզր գետոյն Մեղտեայ, յայն կոյս իջոյց զնոսա 'ի քուն առնել. և ինքն 'ի պատրաստի արարեալ զդարանակալսն, հրամայեաց ծառայիցն՝ կը-տրել զերիվարսն արօտոյ պատճառաւ, և զնոսա յան-հոգս առնել։ Եւ յանկարծակի հնչեցուցին զփողսն յե-տոյ և յառաջոյ, և 'ի մէջ առին զնոսա. և 'ի սակաւ ժա-մու բարձին զգլուխս նոցա, և 'ի գետ անդր ընկեցին, և մի ոք ոչ կարաց զերծանել. և զերիվարսն առաջի ե-գեալ, 'ի Ծծմակն անցուցին։ Եւ մինչ նոքա զայն պա-տերազմն անցուցին և վճարեցին, և յառաջսն եկին այ-սոց, և նոքա դեռ չէին եկեալ 'ի Ծծմակն, և կային մը-նային մինչ նոքա եկին և յանհոգս եղեալ իջին, զի զայն խրատ տուեալ էր Վահանայ։ Եւ ապա կալեալ զխելս կամրջին, և ձայն սաստիկ հնչեցուցին շուրջանա-կի զնոքաք, և սկսան յանխնայ կոտորել զնոսա. և մի 'ի նոցանէ 'ի մօրն [1] թագուցեալ, հեծեալ յերիվարն՝ փախեաւ 'ի Մուշ։ Զորոյ զհետ մտեալ երկուց ոմանց, և յայնկոյս գետոյն ջաղխեցին զգլուխ նորա, և ուղեղն ընդ քիթն իջանէր։ Եւ մեւս ընկերին առեալ աւազ մա-տուցանէր, և ասէր. Պարսից խորտկարար, առ զաղս։ Եւ կոչեցաւ անուն տեղոյն այնորիկ Աղաղս մինչև ցայս օր. զոր և աւան իսկ չինեաց։ Եւ Վահանայ 'ի մօրին տուեալ զնոսա, ոմանք այլ ոչ կարացին ելանել, և ո-մանք 'ի ջուրն անկեալ [2] խեղդեցան։ Եւ զորս 'ի ցամաքն սպանին, զքիթն և զթլփատսն կտրէին և պահէին, և զգլուխսն 'ի մօր անդր և 'ի դաշտն ընկենուին։ Եւ ժո-ղովեալ զերկու հազար երիվարսն, ետ տանել յԵղանց [3] բերդն, զոր դեռ Եղնուան [4] կոչեն։

Եւ 'ի վաղիւն դարձեալ եկին առ Միհրան [5]. և Վա-հան հրամայեաց ծառայից իւրոց՝ ճաշ առնել, և զՄիհ-րան կոչել։ Իսկ նա վասն խօթութեան պատճառանաց

1 Օրինակ մի 'ի դէն։
2 Օրինակ մի արգելեալ։
3 Յերիս օրինակս յՈղնոբերդն։
4 Օրինակ մի Ողնոպն։
5 Յերիս օրինակս առ Նէիոր։

'ի սենեակ մտեալ, զՎահան միայն թողոյր առ իւր։ Իսկ Վահան դռնապան եղեալ, և զիշխանսն որք գային դարձուցանէր, ասելով. Հայոց մարզպանն չկարաց գալ 'ի ճաշն։ Իսկ նոցա ժողովեալ 'ի տաճար մի, ընդ գինի մտին [1]. և Վահանայ առեալ զմախաղն, ուր քիթքն և թլփատքն կային, ետ բերել առաջի իւր։ Իսկ նորա զարհուրեալ, ասէ. Զինչ է այդ, զրոյց տուր ինձ։ Եւ նա կարգաւ պատմեաց նմա ստուգիւ, և մի բան ոչ թագուցեալ 'ի նմանէ զոր ինչ արարեալն։ Իսկ նորա բարկացեալ, առեալ զտէգն 'ի ձեռանէ ծառային, և կամէր հարկանել զՎահան։ Եւ նորա ձգեալ զձեռն իւր 'ի սուրն՝ որ առաջի կայր, կտրեաց զթլփատն նորա, և եդ 'ի բերան նորա, և ասէ. Դու ես, որ թշնամանէիր զաստուած, և զկրօնաւորսն իմ զսիւնսն աշխարհի սպանանել տայիր։ Եւ կտրեաց զքիթսն, և ցուցանէր աչացն. և պատառեալ զփորն, ետ ծառային հանել զլեարդն և դնել 'ի բերանն. և հարեալ զդանակն 'ի փորն [2], և ետ թողուլ 'ի ցից։

Եւ մինչ լոկ որ զթլփատն կտրեաց, ասէ [3]. Ցուր բանից նիշ և պատուէր 'ի պարսիկն՝ որ յԱպահունիս, և ես ապրեցուցանեմ՝ զքեզ։ Եւ նորա տուեալ բանից նըշան և պատուէր՝ բազում՝ երդմամբ ասացեալ, զոր նա և նա միայն գիտէին։ Եւ իբրև ասաց զիրսն, առեալ զդանակն եհար 'ի սիրան, և անդէն մեռաւ։ Իսկ ծառայիցն առեալ զարիւնոտ զդեստ պահէին, և զգետինն մաքրեալ յարենէն, և կողմնեցուցեալ 'ի մահիճան, քնոյ պատճառանօք ծածկեցին։ Եւ ինքն կոչեաց զպարսիկ դպիրն Միհրանայ 'ի սենեակն. և ետ գրել ողջոյն և բանից նիշ [4], թէ յետ երից աւուրց ել 'ի բլուրդ՝ որ 'ի վերայ կոթ ձորոյն՝ հազար արամբք միայն, զի տեսցուք զիրեարս։ Եւ դպիրն գրեաց որպէս ասաց նմա Վահան, և եդ զմատանին Միհրանայ 'ի վերայ. և կոչեաց 'ի ծառայիցն Միհրանայ տասն այր հաւատարիմ, և ետ

1 Օրինակ մի 'ի գինի խառնեցան։
2 Օրինակ մի 'ի փորն։
3 Օրինակ մի Եւ մինչ դեռ յոգոյն էր՝ խնդրեաց բանից նիշ և պատուէր 'ի պարսիկն որ յԱպահունիս էր, և ես ապրեցուցանեմ զքեզ։
4 Յերիս օրինակս ողջոյն և նշանաբան։

տանել զթուղթն առ Վարշիր՝ որ զհազար այրն ունէր ընդ ինքեան, և յԱպահունիս էր. և առեալ զթուղթն գնացին։ Իսկ Վահան կոչեաց զնուիրակն, և ասէ. Երթ կոչեա զայս անուն իշխան։ Եւ կոչեաց. և իբրև գայր իշխանն և մնանէր ընդ փողոցն խաւարչտին[1], միայն վեց այր աստի և անտի կային։ Եւ մինչ դեռ կամէր մնանել 'ի սենեակն, աճապարեալ ունէին զփողոցն, զի մի ձայն ինչ բարձցէ 'ի մեւսն. և հարեալ դանակ 'ի սիրտն, 'ի մեւս այլ սենեակն ձգէին զդին. ուր և զնուիրակն և զդպիրն վասն պատճառանաց[2] իրաց արկանել ետ 'ի բանտն։

Եւ ինքն սկսաւ կոչել զիշխանսն խաբէութեամբ 'ի խորհուրդ, և նենգով այնպէս առնէր. և եսպան յաւուր յայնմիկ իշխանս ութսուն և վեց։ Եւ իբրև վճարեցան իշխանքն, գնաց ինքն 'ի տաճարն՝ ուր զօրքն էին Պարսից. և ժողովեաց զնոսա 'ի ներս, և զիւրն և զայլ գաւառին մարդիկն արտաքս եհան։ Եւ ինքն սկսաւ զնոսա վտանգել բանիւ, թէ արժանն էր ձեզ զմարգարտապսակն[3] զմարզպանին գողանալ. արդ հրամայեալ է՝ զձեզ զամենեսեան մերկ առնել, մինչև ցուցանէք։ Եւ հանեալ զամենեցուն զհանդերձսն, արգել զնոսա 'ի տաճարին, և 'ի մեւս այլ՝ արս հազար իննհարեւր և երիս։ Եւ փակեալ զդրունս տաճարացն, ետ բերել զգլուխն Միհրանայ, կախեալ ընդ երդն, ցուցանէր նոցա ասելով. Այս այն գլուխն է, որ խորհէր զսուրբ կարապետն հիմն 'ի վեր առնել, և զկրօնաւորսն հրով այրել[4]։ Եւ հրամայեաց վառել զերկոսին տաճարսն, և ասէ ցնոսա. Դուք ինձ ՁԵասակարք էք, որք զտաճարսն այլ յայրել էք 'ի տալ. բայց թէ կամի աստուած և սուրբ կարապետն, ես զայս փայտս յապաշաւել եմ թողեալ. սակայն ընդ ձեր և ընդ ձեր թագաւորին կառափն հանեմ. զի ես աշխատեալ եմ 'ի շինելն, և դուք մերկք էք և ցրտացեալք. բայց վասն իմ մեղացն թողութեան և իմ հարցն՝ ՁԵռարուք, ասէ, և մի՛ ամաչէք.

1 Օրինակ մի խաւարչտոտ։
2 Օրինակ մի վասն պատճառաց։
3 Օրինակ մի մարգարտեայ պսակն։
4 Օրինակ մի սպանանել էր։

և տունքդ այդոքիկ՝ գերեզմանք ձեզ եղիցի շնորհիւ Պարսից արքային։

Եւ բորբոքեալ բոցն ճարպո

ըն՝ որ հեռի կային, և դարձուցեալ կոչնակաւս զօրացն այլոց, և զիշխանան մի մի կոչել տայր, և զգլուխսն կտրէր։ Եւ ոչ իմացան այլ զօրքն, մինչև մի ոմն յիշխանացն փախեաւ և անկաւ 'ի բանակն իւր։

Եւ իբրև գիտաց Վահան՝ թէ յայտնի եղև իրքն, աղդ արարեալ այնոցիկ՝ որք 'ի դարանն կային, և յարուցեալ նոցա 'ի յետին կողմանէ՝ փախստական արարեալ զնոսա 'ի բերդն կոյս կոթ ձորոյ [1]. և որ բուն յետինքն էին 'ի դարանի անդ, չյարեան իսկ։ Եւ արք բերդին ընդդէմ ելեալ, քարամբք և գլօք յանխնայ կոտորեցին զնոսա. և փախստականք եղեն արք հարեւր յԱպահունիան։ Զոր տեսեալ դարանակալացն՝ յարեան 'ի վերայ, և կալան զնոսա. և ապա 'ի վաղիւն սկսան մեւս զօրքն Պարսից գալ 'ի վերայ բլերն 'ի նոյն տեղին։ Իսկ Վահանայ ընդ առաջ գնացեալ նոցա, իջոյց զնոսա, և ասէ. Թողէք զերիվարսդ, զի արածեսցին մինչև ցերեկոյ. և յերեկոյին իջանեմք 'ի դաշտն 'ի վերայ Ցունացն։ Եւ նոքա հաւանեալ, արարին այնպէս։ Եւ դարանակալքն յանկարծակի դիմեալք, կտրեցին զերիվարս նոցա 'ի զօրացն, և փախստական արարեալ անցուցին ընդ Արածանի, և հանին 'ի Քարքէ [2]։ Իսկ զօրացն Պարսից տեսեալ, աղաղակեցին միաբան և ասեն. Վայ մեզ, կորեաք։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Կորի [3]։

Իսկ Վահանայ առեալ զզօրսն, իջուցանէ զնոսա 'ի ձորն բուն. յարեան դարանակալքն աստի և անտի, և առեալ զնոսա 'ի մէջ կոտորեցին, ոչ ողորմելով ուրուք։ Եւ հրամայեաց արս քառասուն թողուլ զրուցատարս Պարսից արքային։ Եւ ետ տանել զգլուխն Միհրանայ առ թագաւորն Պարսից, ասելով. Այս մարզպանս Հայոց յորժամ եկն յերկիրս մեր, և զօրս հակառակեալ ընդ իրեարս՝ գունդ խնդրեցին, և ոչ կարացին գտանել. և ցոյնք մեր [4] թշնամիք էին, 'ի նոսա ոչ իշխեցաք գնալ. և ձեզ ընդ ակամբ էաք, և ձեր զօրացն գունդ ոչ կայր. ապա կտրեցաք զգլուխդ զայդ, և խաղացաք։ Այլ լուաք

1 Օրինակ մի ի Բերդն կոյս ի ձոր անդր։
2 Օրինակ մի ի Ջնոցին ընդ Արծնի, Ա հանեալ ի Քարքէայ։
3 Օրինակ մի Կորայ։
4 Ցերիս օրինակս յեր։

եթէ 'ի Շահաստանէ ելեալ էք 'ի Բոստր[1] քաղաք՝ յերկիր տափարակ և դաշտաձև, և գիտեմ որ գնդի խաղայք. առէք զգլուխ քեռորդւոյդ ձերոյ, և եղիցի դա ձեր գունդ ազգաց յազգս։ Եւ իբրև գնացին արքն քառասուն, և տարան զգլուխն Միհրանայ առ արքայն Խոսրով, և նա խռովեցաւ պղտորեցաւ, ամաչեաց զամօթն յաւիտենից։ Եւ 'ի միւսում ամի խրոխտացեալ, այլ զօրս առաքեաց։

Ի նոյն ամի սուրբ Կարապետն, որ յիննակնեան տեղիսն էր, փլաւ. զի շարժ խստագոյն եղև, վասն որոյ և տունք՝ որք 'ի ներքոյ նորա՝ 'ի շարժէ անտի փլան։ Իսկ եկեղեցին, քանզի հիմն 'ի վերայ նորա էր, շարժեցաւ և պատառեցաւ. զոր Մուշեղ Ցարօնոյ իշխանն, տուեալ գանձս բազումս, և հրամայեաց քարակոփս շինել։ Բայց ոչ ժամանեցին շինել որպէս արժանն էր. զի զօրքն Պարսից նեղէին զնոսա։ Ի սոյն ամի շինեաց Մուշեղ զսուրբ կարապետն, և ինքն վախճանեցաւ. և կայ 'ի թաղման առ Արծրունեաց իշխանին, 'ի կողմն արևելից ճակատուն։

Եւ յետ վախճանելոյն Մուշեղայ՝ նստաւ յաթոռ իշխանութեան նորա Վահան, իշխանն մամիկոնէից տան։ Զոր և բազում քահանայիւք և քսան եպիսկոպոսաք տօն ցնծութեան կատարեցին փրկական տեղեացն, ուր զհաւատսն ունէին, և 'ի դուռն սրբոյ կարապետին, և 'ի վանս Գլակայ եպիսկոպոսին[2]։ Եւ ութեւտասն գեւղս ազատեաց և ետ եկեղեցւոյն, ՚Ընջեաց զանուանս նոցա յարքունի դիւանէն։

Ի նոյն ամին վախճանեցաւ երանելին Թոդիկ, հայր վանացն Գլակայ. և կայ թաղեալ 'ի նոյն տեղւոջն, զոր Հայրբլուր կոչեն[3]. որ է ընդ աջմէ եկեղեցւոյն 'ի հիւսիսոյ ընդ արևելս[4]։ Եւ նստաւ յաթոռ նորա մանկիկն Ստեփաննոս, որդի իշխանին Արծրունեաց, որոյ մայրն հերձաւ. և կան 'ի թաղման ծնօղք նորա 'ի նոյն վանան։ Եւ բազում ուղղութիւնս գործեաց 'ի գաւառն Ցարօնոյ,

1 Յերկուս օրինակս Բոստր։
2 Յօրինակի միում պակասէ Եպիսկոպոսին։
3 Յօրինակի միում չէք զոր Հայրբլուր կոչեն։
4 Յերիս օրինակս ընդ Ասեղեաց Բլուրն Իբրև ան 'ի Դջի։

զի վերագոյն ունէին զնա քան զեպիսկոպոսն. զի հայր էր վանացն, և ընդ ձեռամբ իւրով ունէր երեքհարեւր ինն սունեւութ կրօնաւորս. զի այնչափ առաքինի էր, որ ամենեքեան իբրև զՅովաննէս Կարապետն համարէին զնա։

Սա խնդրեաց 'ի սուրբ Կարապետէն, կապել զբերանս գազանացն՝ որք բեկանէին զլուսաբերսն եկեղեցւոյն։ Եւ բազում պարկեշտ վարուք իւրովք յանդիմանէր զիշխանն Հարքայ, որ ունէր զկին եղբօր իւրոյ. և ածեալ 'ի հաւան՝ կորել 'ի կնոջէն, և արարեալ կրօնաւոր, ետ նմա շինել զեկեղեցին՝ որ 'ի Թիլն աւանի յեկեղեաց դաւառի։

ԳԼՈՒԽ Գ.

Վասն գալոյն Վախտանգայ 'ի Տարօն երեսուն հազարաւ, որ և շինեաց զՊորպ քաղաք և զամուրն զԳահար [1], և կացեալ 'ի Գրգուռ ամս երեք։

Դարձեալ զօրաժողով եղև խոսրով արքայ 'ի վերայ Յունաց երկրորդ անգամ, 'ի մտի կալեալ զմահն Միհրանայ քեռորդւոյն իւրոյ. և առաքեաց զՎախտանգ՝ զնորին հօրեղբայրն, երեսուն հազար ընտիր առն և ձիոյ։ Իսկ նորա եկեալ 'ի դաւառն Ապահունեաց, արձակէր հարկապահանջս 'ի Հարք և 'ի Հաշտեանք և 'ի Տարօն։ Առ որ գրեն դաւառապետքն. Եթէ Վահան տայ, և մեք. ապա թէ ոչ, ունայն գնայք 'ի մէնջ։ Զայսոսիկ լուեալ Վաղտանգայ, խրոխտացաւ և ըմբոստացաւ. և թողեալ կողմնապետս յԱպահունիս, և փքացեալ ալեօք եկն 'ի գլուխ Տարօնոյ։ Եւ շինէ զաւերեալն Զիւնկերտ քաղաք մեծ. և փոխէ զանուն քաղաքին ըստ անուան կնոջն իւրոյ՝ զոր էած ընդ իւր՝ Պորպէս, այս ինքըն համեղ։ Տնկեաց այգիս և բուրաստանս. և փոխէ զատրուշանն 'ի դուռնն կաթուղիկէին, զոր հիմնարկեալ էր սրբոյն Սահակայ։ Եւ 'ի վերայ լերինն Տաւրոսի շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Գարհար.

1 Յօրինակի մեջ՝ Գարհար, որպէս ի առաջն։

քանզի անդ ոմանք դահավէժ եղեն 'ի վերայ անասնոց, կարծելով թէ հեծեալք են։ Փոխէ զԳոռոզ լեռնաբլուրն, յանուն որդւոյն իւրոյ Գռէգուռոյ՝ Գռգուռ [1], զբօսանալով յամարան աւուրսն 'ի վերայ նորա։ Եւ յղեաց պարգևս բազումս Վահանայ, և թուղթս՝ զայս ինչ։

Քաջ և հզօր բազկիդ Վահանայ սկայի, դիցն օգնականութեամբ ողջոյն։

Որ թէպէտ և ընդ մահ եղբօրորդւոյն մերոյ արտմեցաք, բայց ընդ հզօր քո իմաստութիւնդ զարմացաք։ Արդ ես եկեալ եմ վասն սիրոյ և խաղաղութեան, և դու արի եկ առ իս, և երդուիր տալ զհարկ արքունի և կալ հնազանդ, և յառաջին պատիւն ձեր մնալ, և այլ ոչ մտանել 'ի նենգութիւն։ Ողջ լեր 'ի դիցն աջոյ։

Եւ նա յղեաց նմա պատասխանի այսպէս.

Վատ և թոյլ անձինդ Վախտանգայ, և խոզ քոյոց դասուց՝ [2] որք զաղբս ճաշակեն, ողջոյն։

Այլ թէպէտ ընդ մահն Միհրանայ խնդացի, բայց ընդ անմտութիւնդ քո լացի. որ զմահն նորա լսեցեր, և զիմ կորովութիւնս ծանեար՝ զոր ինձ ետ աստուած [3], զիաւրդ իշխեցեր գալ 'ի վերայ եկեղեցւոյն աստուծոյ։ Այլ թէ սէր եկիր առնել, զկինդ 'ի հետ ընդէր ածեր. մի՛ թէ որդի՛ խնդրես յերանաց [4] մերոց. և եթէ սիրոյ պատճառանօք եկիր, զիմ քաղաքդ էր չինեցեր և ամրոցս։ Այլ գիտեմ զի սուտ ես, և իբրև զշուն քծնիս [5]։ Արդ զկեանս քո առաջի մահու դիր, և յերկրէս արի ել և գնա խաղաղութեամբ. ապա թէ ոչ, զմահն՝ որ ընդ քեզ անցանելոց է՝ զայն ամենայն երկիր տեսանէ։

Եւ նորա բարկացեալ առաքեաց վեց հազար այր 'ի վերայ նորա 'ի Մուշ։ Իսկ ոմանք ազգ արարին նմա, և ասեն՝ թէ գայ Ռահան 'ի վերայ քո վեց հազարաւ։ Եւ նորա գիշերագնաց եղեալ, գնաց 'ի վերայ նոցա՝ որք իջևանեալք էին 'ի Ծծմակն [6], և յանկարծակի է-

1 Յերկուս օրինակս Գրգռոս, յայլսում՝ Գգռոս։
2 Օրինակ մի խոլգրաց դասուց։
3 Օրինակ մի ջուրն զոր եգ ինչ ասպուաց։
4 Օրինակ մի յարանց։
5 Յերիս օրինակս ինքինս։
6 Յերկուս օրինակս գիշերագնաց եղեալ, գնաց առ ա՛ն՝ որ Ծծմայ յոգն էր, ուր իջեալն էին. յայլսում՝ հասանէ նոցա 'ի Ծմանն, ուր իջեալ էին։

հար զնոսա սրով, և ոչ ժամանեցին ըմբռնել զերի-
վարսն։ Քանզի որդի Նորա Սմբատ ընդ մէջ անցեալ,
կորեաց չորեք հազար երիվարս. և անցուցանէր յայն-
կոյս Արածանոյ, և հանեալ 'ի կողմն Հաշտենից։ Եւ
երկերիւր ձի յառաջին յաղթութեանն աւարամանն
ետուն եկեղեցւոյն 'ի Գլակայ վանսն, զի այն էր տուն
Նոցա Հայրենական. և անդ կնքեցին զնա։ Իսկ Վահա-
նայ տուեալ զնոսա մօրացն՝ զբազում կոտորեաց, և
զբազում խոցոտեաց, և երկերիւր այր 'ի մօր անդր ըն-
կըղմեաց։

Իշխանն [1] Հաշտենից ունէր ընդ ձեռամբ իւրով երեք
հազար վեցհարիւր այր, և իշխանն Պալունեաց երկու
հազար և երկերիւր, և իշխանն Արջուց երեք հազար, և
իշխանն Եղնուտայ [2] հինգ հազար, և իշխանն Վահան
ութ հազար, և Սմբատ որդի Նոցա վեց հազար. ընդ ա-
մենայն քսանևութ հազար։ Այս ամենայն զօրք կային
ընդ ձեռամբ Վահանայ. բայց բաժանեալ էր, և կողմ-
նապահս թողեալ ամենայն տեղեացն. և կային առ ինքն
յաւուր յայնմիկ երեք հազար այր։ Եւ բազում նախ-
ճիրս գործեաց անդ իշխանն Հաշտենից. զի աճապա-
րեալ կորեաց զԳլուխն Ռահանայ, և զզօրսն փախըս-
տական դարձոյց։ Եւ նեղեալ զնոսա, մինչև յաղաչանս
անկեալ՝ և հարկս խոստանային տալ Նոցա։ Իսկ Վա-
հան ասէ. Ցուք 'ի մեզ զգլուխն Ռահանայ, և թողումք
զձեզ։ Եւ զօրքն 'ի բազում տարակուսանս լեալ՝ խընդ-
րէին, և ոչ գտանէին։ Ապա կալեալ զորդի Նորա զՎահ,
ետուն ցՎահան։ Իսկ իշխանն Հաշտենից յառաջ մա-
տուցեալ, ասէ. Կամ տուք զՌահան 'ի մեզ, կամ տուք
երեսուն հազար դահեկան։ Եւ նոքա ետուն երեսուն հա-
զար դահեկան, և դարձան։ Իբրև ետես Վահան եթէ
գնան ամբողջ, զնախանձն ասատուծոյ նախանձեալ՝ յար-
ձակեցաւ 'ի վերայ Նոցա, և սկսաւ կոտորել զնոսա։ Իսկ
Նոցա զաղաղակ բարձեալ, ասեն. Առ ինչ դարձայք 'ի
պատերազմ, ով աւելախօսք։ Եւ կոչեցաւ տեղին այն
Առինչ։ Եւ տարեալ ածեալ զնոսա 'ի դաշտին, կոտո-

1 Օրինակ մի յաւելու Իսկ զօրք որ ընդ Վահանայ յեռամբ էին՝ Իշխանն..
2 Յերիս օրինակս Ողնոտինայ։

բած սաստիկ գործեցին. և որք փախեանն՝ էին պակաս քան զՀինգհարիւր այր. որք երթեալ պատմեցին Վախտանգայ։ Իսկ նորա բարկացեալ, հրամայեաց զլխատել զնոսա՝ որք դարձանն. և ոչ մնաց 'ի վերցհազարէն և ոչ մի։

Իսկ Վախտանգայ 'ի ցասումն բարկութեան չարժեալ վասն Ռահանայ, առաքեաց դարձեալ զԱսուր 'ի վերայ ութ հազարաւ։ Որք եկեալ բանակեցան յեզերս Մեղտայ, և արձակեցին առ Վահան այսպէս. Ա՛յ չարաբարոյ գայլ Վահան. մինչ գիտես եթէ ծառայելոց ես Աբեայ արքային, ընդէր այդպէս յանդգնեալ անամթիս։ Արդ արի եկ առ մեզ, և լեր հարկատու. ապա թէ ոչ, մեռանիս որպէս զշուն։ Եւ նորա լուեալ զայն, առեալ վեցհազար այր՝ գնաց 'ի վերայ նոցա ինքն և որդին իւր Սմբատ։ Իբրև կացին հանդէպ իրերաց, սկսաւ Ասուր թշնամանել զՎահան, և գայլ կոչէր նմա։ Եւ նա ասէ. Ցիրաւի է անունդ ինձ. քանզի գամ կոտորեմ, երթամ և այլ գամ։ Եւ սկսան մարտնչել ընդ միմեանս։

Իբրև խմբեցաւ պատերազմն, ակն կալաւ [1] Սմբատ որդին Վահանայ 'ի վերայ Ասուրայ, և պատահեցաւ նմա։ Իսկ Ասուր տեսեալ՝ եթէ պատանի է, քամահեաց զնա, և ասէ. Քարապաշտ հարճորդի, 'ի բաց կաց, զի 'ի պատերազմող արսն ելանեմ՝ անցանեմ։ Եւ նա ասէ. Որդի սատանայի, յիրաւի է անուն քո Ասուր. զի սուր քո չէ ինչ, և 'ի մարտնչել ընդ մանկանն՝ [2] ծանիցես ըզպարտութիւն քո։ Եւ ածեալ զսուրն՝ կարեաց զգլուխ երիվարի նորա, և զնա յերկիր ընկէց. և յարձակեալ՝ էառ զգլուխն 'ի նմանէ. և 'ի վեր վերացուցեալ, ասէ. Փառք քեզ Քրիստոս և սուրբ կարապետ, որ յաղթեցեր հակառակորդիս։ Եւ մինչ դեռ նա զայն ասէր, տասն այր պատեցին զՎահան. որպէս որք զանտառսն հատանեն, այնպէս յանխնայ կոփէին և նոքա։ Եւ սկըսաւ պակասիլ Վահան. և ձայն բարձեալ, ասէր. Ո՞ւր ես Սմբատ որդեակ, հասիր յօգնս ծերոյս։ Զի էր ամաց

1 Օրինակ մի եդեալ։
2 Ցերիս օրինակս ընդ խրճին։

ութսուն և ութից։ Իսկ Նորա քաջաբար 'ի վերայ յարձակեալ որպէս զարծիւ սրաթիչ, ասէր. Օգնեա մեզ սուրբ կարապետ։ Եւ անդէն եհատ զգլուխ որդւոյն Ասուրայ, և ընդ մէջ ճեղքեալ՝ հանդերձ թիկամբն աջոյ 'ի բաց ընկենոյր։ Եւ զօրացեալ Վահանայ, զվեց երիվարին գլուխսն կտրեաց. և մատնեաց տէր 'ի ձեռս Նոցա զզօրսն Պարսից, և փախստական արարին զնոսա մինչև ցերեկոյն։ Եւ 'ի յութ հազարէն երեք հազար միայն գնացին առ Վախտանգ։ Եւ Նորա լուռ եղեալ մինչև ցմիւս ամն. և 'ի նոյն ամին վախճանեցաւ Վահան քաջն վրէժխնդիր 'ի վերայ եկեղեցւոյ[1], և ետ տանել զինքն 'ի Գլակայ վանսն. և կայ 'ի թաղման 'ի դուռն սրբոյ կարապետին, առաջի սեմոցն։

Իսկ 'ի միւսում ամի զօրս կազմեալ գումարեաց Վախտանգ քսան հազար, և առաքեաց առ Սմբատ, եթէ կամ եկ՝ որ պատերազմիմք, և կամ հնազանդեաց և տուր հարկս։ Իսկ Նորա ժողովեալ տասն հազար այր, գնաց 'ի վերայ Նորա յԱնդակ. և թողեալ զհինգ հազարն 'ի բլերն, որ կոչեն Մահու ագարակ[2], և ինքն գնաց հինգ հազարաւ ընդդէմ Նորա՝ 'ի գրգռել զնա։ Եւ առաքեաց Վախտանգ տասն հազար այր 'ի վերայ Նորա, կարծելով թէ ինքն միայն է։ Եկին զօրքն, և 'ի գիշերի պատեցին զնա. և նա կամէր 'ի գիշերի ելանել ընդդէմ, բայց արգելուին զնա քահանայք դրան Նորա։ Իսկ նա ասէ. Վստահ եմ յաստուած, թէ որովհետև ծառայեալ եմք սրբոյ կարապետին միամտութեամբ, թէ ոչ թողու զմեզ 'ի ձեռանէ։ Եւ ել ջահիւք 'ի վերայ զօրացն Պարսից. և յանկարծակի տեսին այր մի գիսաւոր[3], որ լոյս փայլէր 'ի հերաց Նորա, և զաչս թշնամեացն կուրացուցանէր։ Զոր տեսեալ քաջին Սմբատայ, ասէ ցզօրսն. Քաջալերեցարուք, որդեակք, և մի երկչիք. զի սուրբ կարապետն մեզ 'ի թիկունս հասեալ կայ, և ընդ մեր՝ ինքն պատերազմի։ Եւ մի ոք անհաւատալի զիրսն կարծիցէ. զի ինքեանք սկսան մարտնչիլ

1 Ցօրինակի միում չիք փոքն... եկեղեցոյ։
2 Օրինակ մի Մահու ագրոկ։
3 Օրինակ մի հերաւոր։

ընդ միմեանս, և զմիմեանս սատակել. զի տէր պատերազմէր ընդ նոսա [1]։ Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեանց ելանէին. որ և Թիլ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ [2]։

Եւ իբրև վճարեցին 'ի կոտորելոյ զայնչափ բազմութիւնն, երկերիւր այր համարով թողեալ զրուցարարս այլոցն վասն առն՝ զոր տեսին 'ի գիշերին, զի և թշնամիքն ևս տեսին, և ինքն յուղարկեաց զերիվարսն նոցա 'ի Մուշն աւան՝ առ որդին իւր, որ կոչէր ըստ պապ անուանն [3] Վահան կամսարական, զի զհետևակս քաղաքին հեծեալս արասցէ, և յուղարկեսցէ փութով։ Եւ նորա կազմեալ հեծեալս երկու հազար և հինգ հարեւր, հանէ առ Սմբատ իշխանն [4]։ Իսկ նորա խոյս տուեալ աւուրս ութ, և պատրաստեաց զզօրս իւր. և յետ ութ աւուրն եկն եհաս Վախտանգն 'ի դաշտ անդր, և առ վաղիւն պատրաստեցան 'ի պատերազմ [5]։ Իսկ Սմբատ կտրեաց 'ի գիշերին երկու հազար այր հեծելոց, և անցոյց 'ի տեղի թագստեան զպարսկէն յետուստ կողմանէ [6], և 'ի բլերն յայս կողմանէ երեք հազար։ Եւ յերկու կողմանէն ռազմ գաղտ կարգեաց. և ինքն զութ հազար արսն բաժանեաց 'ի վեց ռազմն։ Եւ ընդ առաւօտն կազմեցան. զի մի զգաղտ դարանսն գիտասցեն, փութապէս 'ի գիմի հարեալ՝ շարժեաց զնոսա 'ի վերայ իւր։

Իբրև ճակատեցան 'ի պատերազմն ընդ իրեարս, զառաջինն յաղթահարեցին զՍմբատ։ Իսկ նորա 'ի բլուրն ելեալ, ասէր. Ո՞ւր էք քաջք, յառաջ մատիք։ Եւ յամենայն կողմանց 'ի վերայ յարձակեցան, և 'ի մէջ առին զզօրսն Պարսից. և խմբեցաւ պատերազմն ընդ իրարս, մինչ զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն 'ի ձայն փողոցն և 'ի տեսս դրօշացն։ Իբրև 'ի գի-

1 Օրինակ մի զի ինքեանք զիրեարս խոցորեին. զի տէր ինքնին պատերազմէր ընդ նոսա։
2 Օրինակ մի չունի որ Ե Թիլ... այնորիկ։
3 Օրինակ մի չունի որ կոչէր ըստ պապ անուանն։
4 Օրինակ մի հասին առ Սմբատ քաջ։
5 Օրինակ մի կազմեցին պատերազմ։
6 Օրինակ մի անցոյց զնոսա ի տեղի թագստի հեծելոցն յետուստ կողմանէ։

մի հարան վախտանգ և Սմբատ, ասէ վախտանգ. կաց հարճորդի. թէպէտ և զբաղումն ջնջեցեր, սակայն այսօր չպրծնուս 'ի ձեռաց քոյ արանցս, որ գէշ գէշ պատառեն զձեզ սուսերք մեր։ Եւ Սմբատ ընդ մէջ անցեալ, էհատ և կարեաց զսռնապանս բարձից նորա, և կարեվէր խոցոտեաց [1], և մերձ տարաւ յընկենուլ ըզվախտանգ։ Եւ նորա ձգեալ [2] զտէգն, եհար զկուրծս նորա. և ցցեալ, 'ի ներքս ոչ կարաց անցուցանել։ Եւ Սմբատայ ձայնս արձակեալ, ասէր. Սուրբ կարապետ, յայտնեա և այսօր զքեզ ծառայից քոց. զի վասն քո մեռանիմք 'ի վերայ հաւատացելոցս Քրիստոսի։ Եւ բախեալ տիգաւ 'ի թիկունս նորա, և անց ընդ զրահսն 'ի ներքս, և էհան ընդ սիրտ նորա։ Եւ հանեալ զսուրն՝ կտրեաց զգլուխ նորա, և ոչ կարաց ունել. զի զբաղում մարդկաւն վազեաց գլուխն վախտանգայ [3]։

Իսկ մի ոմն 'ի ծառայիցն նորա էառ զգլուխն նորա, և փախեաւ. և հասեալ Սմբատայ՝ եհար մրճոփն 'ի վերայ գագաթանն, և գոգեաց զսաղաւարան, և գլխոյն ոսկրն փոսեալ՝ տեղի տայր սաղաւարան մրճին Սմբատայ, և հազիւ կարաց հանել։ Եւ նորա հանեալ ընկէց զգլուխն, և ինքն մեռաւ։ Եւ մեւս այլ ծառայի առեալ զգլուխն փախեաւ. և Սմբատ զհետ մտեալ, ասէ. Պարսիկք, մի անմտանայք. զի մինչև յայս անկաւ վախտանգ, որ սրտացաւ ծառայքդ [4] զգլուխդ առեալ փախչիք. ապա գիտասջիք թէ ձեզ այդպէս պարտ է լինել։ Եւ ձգեալ ծառային զգլուխն 'ի կուրծսն Սմբատայ, և ասէ. Ցար խորովեա և կեր զդա. վայ ձեզ, որ այլ վաղ ոչ սպանէք։ Եւ Սմբատայ առեալ զգլուխն, և զհետ մտեալ ծառային, ասէ. Ա՛յ տիրատեաց պարսիկ, ըզգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեառն քո։ Արդ որովհետև տիրատեաց էք, ես բառնամ զգլուխ քո 'ի քէն։ Եւ եհար զնա տիգաւն 'ի սիրտն, և անցոյց զտէգն յայնկոյս. և ընկեցեալ յերիվարէն, կտրեաց զգլուխ

1 Օրինակ մի չունի և կարեվէր խոցոտեաց։
2 Ցերկուս օրինակս իսկ նա զտէգն նգէալ։
3 Օրինակ մի զի զբաղում մարդովք վազեաց յայնկոյս էանց գլուխն։
4 Ի միւսմ օրինակի չիք որ սրտացաւ ծառայդդ։

նորա. և դարձաւ մեծաւ յաղթութեամբ[1] 'ի բլուրն։ Եւ զօրքն շուրջ պատեալ 'ի վայրին զպարսիկսն սպանին. և ոչ մնացին 'ի նոցանէ, բայց այնոքիկ՝ որք առ ուղտուցն բանակքն էին արք չորեքհարեւր. զորս ոչ հրամայեաց սպանանել, զի փախստականք էին. բայց էառ 'ի նոցանէ հազար և քառասուն ուղտ, և ութհազար ընդ ձի և ընդ ջորի։

Եւ իբրև վճարեցաւ պատերազմն, հրամայեաց ծածկել զնոսա 'ի ձորս և 'ի հեղեղատս. և կոչեցաւ բլուրն այն Մահու բլուր[2]։ Եւ Սմբատ առեալ զզօրսն, գնաց 'ի վերայ քաղաքին Պորպայ 'ի գիշերի։ Եւ մտեալ զօրացն 'ի տունսն, զորս և գտին պարսիկս լեզուաւ՝ սատակէին. և զքիթսն կտրեալ 'ի շարի արկանէին, և բերէին առ Սմբատ։ Եւ համարեալ զքիթսն, գտանէին սպանեալ պարսիկք՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանկըտի՝ չորեք հազար[3]։

Իսկ զորդին Վախտանգայ և զկինն առեալ տարան յԱյծից բերդն, զոր յառաջ Արծուիս կոչէին[4], 'ի պահել զնոսա անդ։ Եւ յղեալ առ Պարսից թագաւորն խոսրով, և ասէ. Ցուր ինձ երկոտասան տարւոյ հարկ, որ զօրքդ քո զիմ՝ երկրիս զնոսան և զհացն կերան, և զփայտսն այրեցին, և զջրոյ՝ զոր արբին զգինն, և զտաճարացն զգինս՝ զոր իմ հայրն այրեաց վասն քո Գայլ վահան. և դարձալ զսապոնի[5] գինսն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրացն զգիշահոտ[6] հալաւն և զարիւնաթաթախ հանդերձսն լուանալ տուաք և ադաք։ Ապա թէ ոչ, գամ հարեւր մարդով 'ի վերայ քո, և զամենայն պարսիկս գերեալ՝ 'ի Ցարօն ածեմ՝, և 'ի քո աստուածքդ շուն խառանեմ[7], որ փոխանակ դոցա հայեն 'ի ձեզ։ Արդ փութով, զոր ինչ ասացի քեզ, ար-

1 Օրինակ մի խնդութեամբ։
2 Օրինակ մի Մահու ափրակ։
3 Օրինակ մի գտան և զորս հազար։
4 Օրինակ մի շունի զոր յառաջ Արծուիս կոչէին։
5 Յերկուս օրինակս զսապին։
6 Օրինակ մի զգիշերհոտ։
7 Օրինակ մի խառանեմ։

ձակեա, ապա թէ ոչ, տեսանես թէ զինչ անդք ան-
ցանեն ընդ ձեզ։ Իսկ նորա լուեալ, ծաղր առնէր զՍրմ-
բատ. և ոչ դրեաց պատասխանի թղթոյն Սմբատայ։

Բայց եղբայրն Վախտանգայ Սուրէն, առեալ հա-
րեւր հազար դահեկան [1], և ինն հազար այր, եկն 'ի Տա-
րօն՝ գնել զկինն և զորդին Վախտանգայ։ Եւ ընդ ա-
ռաջ գնացեալ Սմբատայ, ընկալաւ զՍուրէն եղբայր
նորա սիրով, և էած 'ի Մուշ։ Եւ կացեալ աւուրս տասն,
խնդիր արար Սուրէն եղբօրորդւոյ իւրոյ՝ թէ ուր է։ Իսկ
նոքա ցուցին զբերդն՝ թէ անդ է. և նա ասէ. Անդ այծ-
արածն է թէ դիւարած։ Եւ ծիծաղեալ Սմբատայ ընդ
աղի բանսն Սուրենայ, առաքեաց և ետ բերել զկինն և
զորդին առաջի իւր։ Եւ իբրև ածին, ասէ Սուրէն. Իշ-
խան հզօր 'ի վերայ աշխարհիս Հայոց, տաս զսոսա Պար-
սից արքային տուրս։ Իշխանն ասէ. Պարսից արքային և
մեռեալ շուն մի ոչ տամ, որ ճաշ ուտէ՝ առանց գնոյ,
թող թէ զդոսա։ Բայց դու գնել թէ կամիս, քաջ տամ.
ապա թէ ոչ, գնացէք դուք երեքեանդ յԱրծրունիս այծ [2]
արածեց'ք, և բերդին ծառայութիւն արարէք, և զիմ
հացս կերայք աներախտիս։

Իսկ Սուրէն քանզի իմաստուն այր էր, ասէ. Ո՛վ բա-
րեպաշտ և հզօր իշխան, թէ և զշուն դարապասիդ քո ա-
րածել տայիր, դեռ պարծանս է մեզ՝ որ 'ի դրան քում
կայաք, թող թէ այծ արածել։ Բայց թէ լսէք մեզ, ա-
ռէք 'ի մէնջ հարեւր հազար [3] դահեկան, և երկու հա-
զար ուղտ, և վեց պարսիկ ձի [4]. և մեզ տուրս տուք զայս
կինս և զմանուկս։ Իշխանն ասէ. Զայդ՝ որ բերեալ ես,
այդ մեր է. զի զքո գլուխդ կարեմ, և զոր ունիս՝ յիս
առնում։ Բայց թէ դոքա քեզ պիտոյ են, դու քրիս-
տոնեայ լեր և կնքեաց, և զիս առ և 'ի պարսիկս գնա,
և դոքա քեզ. ապա թէ ոչ, ձեզ այլ հնար իմացէք [5]։ Իսկ
Սուրէն բերեալ ետ զհարեւր հազար [6] դահեկանսն և

1 Օրինակ մի ինն հարիւր հազար։
2 Օրինակ մի այծեր։
3 Օրինակ մի ինն հարիւր հազար։
4 Օրինակ մի ուղտ, և հինգ հարիւր յի։
5 Օրինակ մի այլ ճար իմացիք։
6 Օրինակ մի զինն հարիւր հազար։

զուզտան և զձիսն առաջի, և ասէ ցիշխանն. Աւագիկ է տուրդ։ Իսկ նա ասէ. Հաւանիմ արոցդ, բայց հարեւր և ութսուն հազար փայտ են տարեալ 'ի Քարքէոյ, և չորեք հարեւր հազար դահեկանի խոտ են կերեալ 'ի դաշտէդ, և վաթսուն հազար դահեկանի՝ որ զեղն և զեղջերու և զնապաստակ երկրիս որսացեալ են և կերեալ. զԼրոյ և զՀացի գինն թողում։ Բայց զանոյշ գինին Ասորոց [1] և Սալնայ և զՄոխրայ այս երկու տարի է՝ որ յինէն կարեալ էին, և ինքեանք արբին, զայն թող տան. և զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և ըզքաղաքին մուտսն՝ զոր կերեալ են երեք հարեւր [2] դահեկան, զայդ ամենայն թող բերեն. և դու քրիստոնեայ լեր, և զիս 'ի պարսիկս տար, և դոքա քեզ։

Տրտմեցաւ Սուրէն, և ոչ կարաց խօսել զերիս աւուրս։ Եւ ապա արձակեաց իշխանն առ նա, և ասէ. Մի՛ տրամիր, զի ըստ քո կամացդ [3] առնեմ զամենայն ինչ. բայց արի անցանեմք յայնկոյս, և յուխտս երթամք 'ի վանս իմ, զոր չինեաց հայրն իմ։ Եւ առեալ զՍուրէն անցին յայնկոյս Արածանոյ, և զկինն և զորդին 'ի հետ տարան։ Բայց զի նենգել կամէր պարսկին, զկին և զորդին և զՎահան կամնարական [4] յայնկոյս թողեալ, զի որ 'ի նա անկցի՝ նա սպանցէ։ Եւ ինքն թողեալ զզօրս իւր 'ի Մեղտի չորեք հազար այր, և զՊարսիցն յանդաստան վանացն՝ զոր Արտից գեւղն կոչեն, և առեալ չորեքհարեւր այր ընտիր զիւրեաւ [5], և չորեք հարեւր զնորայն, և գնացին երկոքեանն 'ի վանսն։ Եւ իբրև եկին առ թագուցեալ խաչն [6], իշին յերիվարացն, և գնային հետևակ 'ի վանսն. քանզի չէր հնար ումեք երիվարաւ ընդ այն տեղւոյն 'ի վեր անցանել։ Նոյնպէս և յարևելից կուսէ ձորոյն 'ի ստորոտ զառ 'ի վերին մինչև յեկեղեցին չիշ-

1 Յերկուս օրինակս զԽառանոյ գինին։
2 Օրինակ մի ըրեթ հարեր հազար։
3 Օրինակ մի զքո կամացդ։
4 Օրինակ մի զորդին Վախտանկայ. զի որ 'ի Վահան անկցի 'ի Պարսիցն՝ նա սպանցէ։
5 Օրինակ մի այր զիւրան։
6 Օրինակ մի 'ի Խաչատուրաց խաչն։

խէր ոք գալ. զի թէ Տրդատ և սուրբն Գրիգոր ոչ իշխէ-
ին գալ անդ երիվարաւ, ապա ո՞վ այլ ոք [1]։

Արդ իբրև մերձեցան 'ի վայրս վանացն, ընդ ա-
ռաջ եկին պաշտօնեայքն, և արգելուին զնա վասն
Սուրենայ։ Իսկ Սմբատ բարկացեալ ասէր. Որովհետև
պարսիկք այնպիսի պիղծք էք, որ և մայրեացն արժանի
չէք, գուք և կենաց արժանի ընդէր էք։ Եւ յարձակեալ
'ի վերայ նոցա վարազայ իշխանին Պալունեաց, եհար
սրով և կտրեաց զգլուխն Սուրենայ։ Եւ զերկու իշխան-
սէն Պարսից կախեալ զծառոյն [2] խեղդեցին, և ինքեանք
դարձան յերիվարսն. քանզի զօրք իշխանին Պալունեաց
թագուցեալ էին 'ի բլուրն 'ի փոքր ամրոցին 'ի Մեծամ-
ին, արք երեքհարեւր, 'ի ներքոյ Անդակայ. և հեծեալ
նոցա յերիվարսն, մինչև իջուցին 'ի Մեծամօր։ Եւ որք 'ի
դարանին էին, ընդդէմ եկին. և 'ի մէջ առեալ զայն չորեք
հարեւր [3] արսն կոտորեցին, և ինքեանք իջեալ յայլ
զօրսն գնացին։ Արդ այնք, որք յամրոցին Արտից գեղջն
էին, 'ի գիշերին 'ի դուրս ելեալ՝ իջին 'ի վերայ Պարսից.
և կտրեալ զերիվարս նոցա աւելի քան զերկու հազար
և հինգ հարեւր, և հանին 'ի Սրոց [4] ձոր։ Իսկ զօրացն
Պարսից զհետ մտեալ դողոցն [5], և հասեալ յայն տեղի՝
որ կոչի Գողոց աղբեւր, և դարձան 'ի վերայ նոցա ձիա-
տարքն [6], և հարին պարսաքարօք և աղեղամբք հինգ-
հարեւր և քսան այր. և զերիվարսն առին և խառնեցին
յայլսն, և եղեն երեք հազար ձի։

Իսկ ոմանք հետևակեալք ձորամուտք եղեն 'ի Պար-
սից զօրացն. և գնացին յանտառն, և անկան 'ի վերայ
ձիագողոցն, և սկսան կոտորել։ Իսկ որ աւագն էր 'ի
ձիագողսն, որոյ Սրեմն [7] կոչէին, դարձաւ ընդդէմ. և
սուր հանեալ՝ ինքն միայն պատերազմեցաւ, մինչև
դարձան ընկերք նորա։ Եւ իբրև նոքա դարձան՝ Սրեմ

1 Օրինակ մի ապա ո՞վ իշխէր յանդգնաբար երիվարաւ գալ յ'ելեղէցին։
2 Օրինակ մի ղծառէ կախեալ։
3 Օրինակ մի հինգ հարեւր... առ այլ զօրսն։
4 Ցերկուս օրինակս 'ի Սրենոյ ձոր. ի միւս այլ՝ Սրոյոր։
5 Օրինակ մի ձիագողոց։
6 Ցերկուս օրինակս ձիագողք։
7 Ցերկուս օրինակս Սերեմ. որպէս և 'ի ստորև։

մեռաւ, զի հարին նետիւ 'ի սիրտ նորա. և թաղեցաւ 'ի նոյն ձորն, և կոչեցաւ անուն ձորոյն այնորիկ Սրեմա-ձոր[1]: Եւ ընկերքն քարիւ և նետիւ ընդդէմ դարձան, և սպանին զբազումս. և այլքն փախստական եղեալ՝ եկին ժողովեցան 'ի մի վայր, և իջեալ ճաշէին:

Իսկ ոմանք յՈղկանայ եղեալ գնացին որսոյ պատճառանօք երկերեւր և յիսուն այր: Իբրև տեսին՝ զի յանհոգս էին իջեալ պարսիկքն, գողաբար յարձակեցան 'ի վերայ, և ոչ ոք կարաց յերիվարն ելանել· այլ 'ի շուրջ եկեալ, և 'ի սեղան անդր սպանին հինգ հարեւր և ութ այր. և վասն որ անդ ժողովեալ սպանին, կոչեցաւ անուն տեղւոյն Ժողովա:

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, Սմբատ և իշխանն Պալունեաց թագեան 'ի ձոր ուրեք: Եւ առաքեցին զոմն 'ի Մեղտի, թէ փութացէք գալ 'ի վերայ գոցա. և ինքեանք առաքեցին արս հարեւր, գրգռել զզօրսն Պարսից: Զոր տեսեալ զօրացն, գրոհ տուեալ[2] զհետ՝ մի մի հասանէին: Իբրև եկին զօրքն առ Սմբատ, ասեն. Ցուք զձեզ 'ի բլուրն, զի տեղին աջող[3] է պատերազմի. և անձնապահ լիք, մինչև մեր զօրն հասանէ: Եւ նոցա 'ի բլուրն ելեալ, և զօրացն Պարսից բազմացեալ[4] 'ի վերայ Սմբատայ և Վարազայ, և նոցա կրկնեալ ծունր աստուծոյ յօգնութիւն կոչելով զսուրբ կարապետն. Ցիշեա, ասեն, զերախտիս մեր. և որպէս 'ի հեռուստ օգնեցեր, 'ի մօտոյս մի վերջանար 'ի մէնջ: Եւ եհաս 'ի թիկունս օգնականութիւնն աստուծոյ:

Եւ փողոց տուեալ 'ի վերայ բլերն, Սմբատայ յաջ թեն, և Վարազայ յահեակն, և սկսան արեամբ թաթաւեալ[5] ինքեանք և երիվարք իւրեանց: Եւ մաձեաւ սուրն 'ի ձեռին Սմբատայ, և ոչ կարաց հանել. քանզի մաձեաւ արիւնն ընդ սուրն և ընդ ձեռնատեղին, և կոտորեցաւ[6]: Եւ իբրև տեսին պարսիկքն՝ եթէ ոչ կա-

1 Ցերկուս օրինակս Սէրէմայոր:
2 Օրինակ մի գոռհ էգոան:
3 Օրինակ մի աջողչ է:
4 Օրինակ մի բազմանալ:
5 Օրինակ մի ներեռաթել:
6 Օրինակ մի Ե ուլ էարաց հանել՝ զի էոգորէալ էր ի բոանն:

բայց առնուլ այլ սուր, ձայն տուեալ՝ ասէին ցմիմեանս. Փութասջիք, զի մածեալ է ձեռն քաջին, և կապեայց զնա աստուածն իւր, և սուրն 'ի ձեռին կոտորեալէ։ Եւ պատեցին զնա բազումք. և իբրև զփայտ չոր, որ 'ի ճեղքիլն ճարճատէ, այնպէս ճարճատէին 'ի վերայ գլխոյն Սմբատայ զէնք[1]։ Իսկ նա բարձր ձայնիւ ասէր. Վայ քաջութեանդ ձերոյ, զի ոչ կարացիք հերձուլ զգլուխ իմ։ Զայս ասաց, զի յիշելիք լիցի բանն։ Բայց իբրև գիտաց՝ եթէ կարի սաստկացան 'ի վերայ նորա, ձայն բարձեալ՝ ասէ. Ո՞ւր ես բազուկ քաջ, և մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց, գաւազան իմոյ ծերութեանս, իշխան Պալունեաց. յառաջ մատիր որպէս քաջ արծուի, զի անգեղք և բուէճք պատեցին զիս։ Եւ նորա թողեալ զահեակ թևն յորդին իւր Վահան, որ զՎահանովիտն չինեաց, և ինքն քաջաբար որպէս զարծուի՝ կանչեալ դիմեաց 'ի վերայ։ Որ և 'ի դողման հարեալ ամենայն երիվարացն, և հասեալ 'ի թիկունս Սմբատայ, և բախեալ զտէգն 'ի վերայ պարսկին թիկանն[2], և անդէն եհան ընդ ողն երիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել զտէգն։ Զոր ծաղր արարեալ, ասէր. Երթ չափեա զտէգդ՝ թէ քանի կանգուն է. մի՞ ոք սուտ ասէ՝ թէ երեք գիրկ է, և խաբէ զքեզ։ Եւ անդէն մեռաւ։

Իսկ Սմբատայ ելեալ յեզր պատերազմին, և ձախ ձեռամբ պրկեաց պարսիկ մի, և եհ զենուլ 'ի վերայ ձեռին և սրոյն, զի ի՞նչ է ջերմ արիւնն և թուլացուցէ զբռնատեղն[3]։ Եւ փոխեալ այլ սուր, և ելեալ յերիվարն. և իբրև հեծաւ, եհես զի հազար[4] այր պատեցին զնա կրկին, և 'ի մէջ առեալ զՀինգհարեւրսն։ Եւ իբրև գիտացին՝ եթէ կայեալ են երիվարքն, էհար պարսիկ մի և ընկէց, և զերիվարն առեալ մատոյց վարազայ իշխանին, և ասէ. Էջ և հեծիր իշխան Պալունեաց։ Իսկ նորա փոխեալ զոտնն, նստաւ 'ի վերայ նորա. զոր տեսեալ զօրացն՝ զարմացան. և այսպէս արարեալ՝ 'ի մէջ

1 Օրինակ մի ի մեջբերն՝ ճարճատէին ի վերայ Սմբատայ։
2 Օրինակ մի ի վերայ Ռիկան մեռն։
3 Օրինակ մի սրոյն, և Ռուլացաւ սուրն. և փոխեաց այլ սուր։
4 Օրինակ մի վեց հազար այր ... և ի մէջ առին։

ահաւոր պատերազմին[1] փոխեցին զերիվարս իւրեանց։ Զի որչափ և զօրքն բազմանային, նոքա յանհոգս լինէին 'ի մէջ նոցա. զի այնչափ կուտեցան 'ի վերայ, որ և տեղի չգտանէին՝ որ յերգր ելանէին։

Եւ իբրև սկսան ոմանք երկմտել 'ի զօրացն Սմբատայ, ըստ տեսչութեանն աստուծոյ տեսին զմեւս Սմբատ՝ զի գայր, որ էր իշխան Հաշտենից. և ածէր զՎահան կամ-սարական զորդին Սմբատայ, և վեցհազար այր ընդ նմա։ Զոր տեսեալ Վարազ իշխանին, աղաղակեաց և ասէ. Քաջորդի Վահան, ուր էիր՝ որ ոչ վաղ եկիր յօգնութիւն։ Իսկ Վահան ձայն բարձեալ, ասէր հանդերձ արտասուօք. Կա՛յ այն տառապեալ հայրն իմ ծերունի, եթէ փոխեցաւ առ տէր 'ի հանգիստ։ Իսկ Սմբատայ լուեալ, ասէր. Սուրբ Կարապետն ինձ 'ի թիկունս հասեալ էր, և ես 'ի ձեռաց անօրինաց մեռանէի։ Իսկ նորա գոհացեալ զաստուծոյ, և 'ի դիմի հարեալ՝ կտրեցին փողոց, անցին 'ի ներքս. և պարզեցին զմի թևն նա, և զմիւսն իշխանն Հաշտենից Սմբատ. և յինքեանս առեալ զպատերազմն, սկսան կոտորել զպատերազմագլուխսն[2]։ Եւ 'ի վերայ շրջեալ, զմեւս թևն Վահանայ բոլորեալ, 'ի մէջ առեալ զզօրսն Պարսից, կոտորեցին մինչև յերեկոյն։

Եւ իբրև 'ի մուտս եղև արևն, մնացին 'ի Պարսից չորեքարեւր այր[3], որք ընդ միջոցն ելեալ փախեան. և քանզի մնացեալք էին երիվարք նոցա, երթեալ մտին 'ի ձոր մի, և թագեան ննջեցին խոյս առեալ[4] մինչև 'ի մեւս աւուր հասարակն։ Զոր եկեալ զօրացն գտին, և ջուր ցանեալ 'ի վերայ նոցա՝ զարթուցին, և առեալ տարան զնոսա 'ի Մեղտի. և կոչեցաւ տեղին այն Թրմբրաձոր։ Իսկ Սմբատ հրամայեաց զդիակունսն կուտել 'ի վերայ իրերաց 'ի բլուրն. և վասն Վարազայ կոտորածին՝ կոչեցաւ տեղին այն Վարազաբլուր[5]։ Եւ ին-

1 Օրինակ մի բաղմաութեանն։
2 Օրինակ մի գլխոյ պատերազմին։
3 Օրինակ մի հինգ հարիւր այր։
4 Յերկուս օրինակս խոցոտեալ։ Իսկ 'ի միւս՝ խոյս տուեալ։
5 Ի միւսմ եւեթ օրինակի Վարազաթաբլուր։

քեանք եկեալ ի՛ջաւանեցան 'ի վանաց գեւղն, զոր կոչեն կենաց վայրք. և իբրև մտին 'ի գեւղն, ընդ առաջ եղեն նոցա պարաւորքն և երգս առեալ բազում ինչ իրաց՝ գովէին։ Որ և յետոյ 'ի հոտել գիւականցն և յորդնել[1], չէր հանեալ՝ ասէին։

Կերան գազանք[2] զմարմինս դիւականցն վարազայ, և գիրացան։ Կուզ կերեալ, ուռաւ[3] որպէս զարջ. և աղուէս հպարտ եղև քան զառեւծ։ Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց. և արջ, քանզի զոր ուտէն՝ չմնայ առ ինքն, 'ի սովոյ մեռաւ։ Անգեղք, քանզի ագահք էին, նստան և այլ ոչ կարացին վերանալ. մկունք, քանզի շատ կրեցին 'ի ծակսն, ոտքն[4] մաշեցան։

Զայս ամենայն ասացին, և 'ի դէպ էր վասն իրացն. որ և կոչեցաւ անուն գեղջն Շիրականիք[5]։

Իսկ զարան՝ որ 'ի Մեղտի տարան՝ բժշկեալ 'ի ցաւոց վիրացն, և ետ նոցա գանձս և երիվարս և զէնս. և յղեաց զնոսա 'ի պարսիկս[6]։ Եւ ինքեանք ելեալք 'ի տէրունական տունն, ընծայս բազումս մատուցին աստուծոյ 'ի սուրբ կարապետն, և ցնծութեամբ դարձան 'ի տունս իւրեանց։

Եւ 'ի սոյն աւուրս վախճանեցաւ երանելին Ստեփաննոս, և կայ առ այլ հարսն 'ի Հայրաբլուրն։ Եւ առեալ վահանայ զեպիսկոպոսունսն[7] մամիկոնենից և զՊալունեաց և զՀաշտենից, և եկն 'ի վանսն Գլակայ. և ձեռնադրեցին հայր վանայն զեպիփան, որ 'ի Դունայ դաշտէն էր եկեալ[8] յանապատ, և բնակեալ 'ի վայրսն եկեղեցւոյն։ Սա եկաց քսաներորդ երկրորդ[9] զկնի Ստեփաննոսի. և կացեալ 'ի վանականութեանն ամս քսան, և գնաց 'ի ժողովն՝ զոր արար Հերակլ յինն և

1 Օրինակ մի որդնեալ՝ զայս ի դէպ ածեալ չէր ասացին։
2 Օրինակ մի գայլ։
3 Օրինակ մի ուռեաւ։
4 Օրինակ մի ոգոին։
5 Օրինակ մի ելեցաւ գեղջն այնորիկ Շիրեանիք։
6 Օրինակ մի յղեաց զրոցապարս Պարսից։
7 Օրինակ մի զեպիսկոպոսն։
8 Օրինակ մի ի Դիշնայ գանէն էր եկեալ։
9 Յերիս օրինակս քսանէրորդ։

'ի տան ամի թագաւորութեան իւրոյ[1], և նզովեցին զամենայն հերետիկոսունս. և եպիսկոպոսն Հաշտենից հալածական լիներ յերկիրն Յունաց[2]։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ ՊԱՏՃԵՆԻՆ

Վասն գալստն Տիգրանայ, և կոտորածին՝ որ 'ի Հոնընկէցն։

Դարձեալ այլ զոր առաքեաց Խոսրովՙի վերայ ապըստամբ տոհն մամիկոնենից, զՏիգրան զօրապետն մեծ՝ քսան հազարաւ։ Իբրև եկին յԱպահունիս, կոչեաց զՍմբատ առ ինքն. իսկ նա յղեաց զորդին իւր զՎահան կամսարական, տեսանել թէ զինչ խնդրէ։ Իբրև գնաց իմացաւ զիրսն, արձակեաց պատասխանի առ հայրն և ասէ. Սա բազում անգամ բարիս խոստանայ, և բազում անգամ չարիս. բայց խնդրէ զնշխարս Մուշեղայ իշխանին և զքո հօրն Վահանայ, և զկինն Վախթանգայ և զորդին՝ զոր սպանին 'ի պատերազմին Վարազայ[3]։ Ապա թէ ոչ, գամՙի տեղին, ասէ, ուր հաւատք ձեր են. զայն բրեմ և աւերեմ, և կրակատուն առնեմ զեկեղեցիս ձեր, և զձեզ 'ի դուռն արքունի խաղացուցանեմ։ Արդ զայս ասաց, և ինքն ընդ Հաշտեանս կամի գալ 'ի վերայ. այլ ես գնամ զհետ նորա. և դու ժողովեա զզօրս մեր, և գնա 'ի սուրբ կարապետն, աղաչեա զկրօնաւորսն՝ աղօթս առնել։ Ողջ լեր 'ի տէր։

Իսկ Սմբատայ լուեալ զայս, առեալ զթուղթն՝ գնաց առաջի սրբոյ կարապետին. տարածեաց զձեռսն առաջի սրբոյ սեղանոյն, սկսաւ լալ և ասել. Զարթիր տէր, և զարթո զզօրութիւնս քո. տես[4] տէր, մի լռեր տէր, և մի դադարեր. քանզի կարի խրոխտացաւ թըշ-

1 Յերկուս օրինակս յինն ամին իւրոյ։
2 Յայսմ վայրի անմիաբան են իրերաց օրինակք և աղաւաղեալ։
3 Յերիս օրինակս Վարազայ 'ի միւս այլ՝ Վարդայ։
4 Օրինակ մի թէսէր։

նամին 'ի վերայ մեր, այլ կամք քո եղիցին. բայց սա-
կայն աղաչեմք, յեշեա զՅանն մեր՝ որ 'ի վերայ քո վան
ուխտին սրբութեան մերոյ, որով փառաւորեսցի անուն
քո սուրբ։ Եւ զայս ասացեալ, ետ բերել երկոտասան
թուր, և դնել առաջի բեմին մինչև պատարագ մատու-
ցանէին. և ապա առեալ ասէ. Տէր, հաւատամք 'ի քեզ,
թէ և այս սուրբս եղիցին խմոր այլ սուսերաց, և հրա-
մանաւ քով յաղթեսցուք նոցա։ Ո՛վ տէր, նեղեցաք ձան-
ձրացաք 'ի կոտորելոյ անգամ զանօրէնսն. նեղեցան և
որք զսուսերս մեր 'ի Ժանկոյ և յարեանցն սրբեցին [1].
այլ յուսամք՝ թէ որպէս արարերդ, և առնես։

Եւ ելեալ գնաց ժողովել զզօրսն, իննհազար իննհա-
րեւր և քառասուն այր [2]. և երթեալ էջ 'ի Հաշտեանս,
'ի գեւղն՝ որ Գիրեհն [3] կոչեն, 'ի ջրառատ վայրսն։ Եւ
Տիգրան [4] եկեալ 'ի Հոնընկէցն իջանէր. և առաքեաց
առ Սմբատ, և ասէ. Արի եկ առ իս, և մի երկնչիր, և
առ յինէն գանձս և մեծութիւնս, և եղիր պատակ 'ի
գլուխ քո, և արարիր զքեզ մարզպան Հայոց, միայն լոկ
զոսկերսն Մուշեղայ և զՎահանայ տուր ցիս։ Իսկ նորա
կալեալ զպատգամաւորսն, հրացոյց շամփուր մի երկա-
թի, և եդ պատակ շուրջ զճակատովն, և ասէ. Դաց [5]
տեսանեմ՝ թէ վասն քո զինչ պարգևս գայցէ ինձ, որ
ես քեզ պատակ եղի։ Եւ հրամայեաց ունել զամենայն
արսն՝ որ ընդ նմայն էին եկեալ, և կտրեաց զգլուխս
նոցա մինչև ցվեց ժամ աւուրն [6]. և կոչեցաւ տեղին այն
Մոգուց գերեզման, որ է Մոկկունս [7]։

Իսկ Սմբատայ ելեալ 'ի վերայ լերինն, որ Սրեմավայ-
րըս [8] ասեն, բանակեցաւ Հանդէպ Տիգրանայ։ Եւ իբրև
երեկոյ եղև, Վահան կամսարական որդին Սմբատայ

1 Օրինակ մի Նեղեցան և սուսերք մեր ի ծանգոյ արեանն։
2 Օրինակ մի փոսն հապար։
3 Յերիս օրինակս Կրեհն։
4 Օրինակ մի յաւելու զջրոք խորոք։
5 Օրինակ մի Խող փէսանէմ։
6 Օրինակ մի յաւելու և արարեալ այնպէս՝ յգեցին գլուխս հինգ ի մոր անդր։
7 Յերիս օրինակս Մոգպոանս։
8 Յերիս օրինակս Սերեմավայրք։ Ի միում օրինակի զոր Սրամայ վայրն ասին։

յարուցեալ կտրեաց զգլուխ որդւոյն Տիգրանայ և զերիս իշխանացն, զի էին 'ի միում խորանի. և առեալ զգլուխս նոցա, եկն առ հայրն իւր, և դարձեալ եկն 'ի նոյն տեղին. և գնացեալ գաղտուխթեամբ[1] եմուտ ընդ ստորոտ խորանին առ Տիգրան։ Իսկ նորա տեսեալ զսուսերն մերկ 'ի ձեռին նորա, ոչ իշխեաց ումեք ձայն տալ. կարծեաց թէ զկարասին կամի գողանալ։ Իսկ Վահանայ յանկարծակի առեալ բարձ մի, աճապարեաց և նգեաց[2] 'ի վերայ բերանոյ նորա, և հարաւ 'ի վերայ նորա. և մոռեալ մեւս այլ ծառային Վահանայ կտրեաց զգլուխս նորա, և ժողովեալ զկարասին և զպատուական ակունսն և զընտիր սուսերսն[3], ել գնաց։ Եւ խնդացեալ զօրացն Հայոց, մեծ գոհութիւն աստուծոյ մատուցանէին. և ապաշաւեցին, զի զգերեզմանս իշխանացն աւերեցին[4]։

Իսկ Վահանայ լցեալ իմաստութեամբ, առեալ երկերեւր կաշեայ ասպար, և արկ զհարեւր ջորեօք ամեհեաք, երկաթ մի յայս կոյս ասպարին, և երկաթ մի յայն. և գնաց մերձ 'ի բանակն Հոնին՝ որ փոխանակ էր Տիգրանայ, և ունէր ընդ ձեռամբ իւրով ութ հազար այր, և բանակեալ էր մերձ 'ի քարագլուխն՝ որ հայի հանդէպ Տարօնոյ լերինն[5]. և էր սա զատակաց[6] յայլոց բանակացն. արդ առեալ Վահանայ զհարեւր ամեհի[7] ջորիսն, և տարաւ զնոսա յեզր բանակին. և 'ի տասն ջորիսն այր մի՝ որ զհետ երթայր։ Եւ իբրև խթեցին զջորիսն սրով և արկին 'ի բանակն, և ինքեանք զհետ մոռեալ՝ զփող պատերազմին հնչեցուցին, և առ ձեռն սկսան կոտորել. և կանչեալ զարհուրեցան ժպըրհեցան[8], և աղմկեցան յոյժ։ Քանզի և ջորիքն ընդ ձայն ասպարացն, և ընդ զօրացն աղմկել, և ընդ փո-

1 Յօրինակ միում գաղտուստ, յայլում գաղտանգ. և 'ի միւս այլ գաղտուկ։
2 Օրինակ մի աճապարէալ յգգեաց ի վերայ նորա։
3 Օրինակ մի չունի զընտիր սուսերսն։
4 Օրինակ մի չունի և ապաշաւեցին... իշխանացն աւերեցին։
5 Յերիս օրինակս որ հանդէպ հայէր լերինն Տարօնի։
6 Օրինակ մի զաստակն։
7 Օրինակ մի արմահի։
8 Օրինակ մի չունի ժպրհեցան։

զոցն բախելն խրտուցեալ, յամենայն կողմանց լոկ արշաւէին 'ի բանակն։ Եւ զօրքն կարծէին եթէ հեծեալ է, և ձայն սուսերացն 'ի կոտորելոցն է, իւրաքանչիւր ոք լոկ վայ ճչէին, ոչ գիտելով զհետս անձանց. քանզի տէր պատերազմէր ընդ նոսա։

Արդ քանզի այլ զօրքն[1] ոչ կարէին անցանել, զի էր մութն, և մեր զօրքն լոկ սատակելով նեղէին, և զքաղաքալուխն բնաւ չկարացին յիշել, զի յիմարեցոյց զնոսա տէր, ապա թողեալ զկարասին՝ դէմ փախստի 'ի քաղաքալուխն արարին. և սկսան 'ի վայր հոսել ահաւոր վիմացն ընդ բարձրութեան[2]։ Եւ ոչ ոք կարաց գիտել զիրսն, մինչև պակասեցաւ ճիչ աղաղակին, և ապա դիտացին զօրքն Հայոց՝ թէ ընկղմեցան պարսիկքն. դարձան ինքեանք 'ի բանակետղ, և զկարասին և զգանձն ժողովեցին և զերիվարսն և զուղտսն, և արձակեցին 'ի գաւառն Պալունեաց։ Եւ ընդ ձի և ընդ ջորի և ընդ ուղտ և ընդ էշ՝ գտաւ ութ և տասն հազար, որ ծածկէր զերեսս գաւառին։ Արդ իբրև առաւօտ եղև, սկսան խնդիր առնել Տիգրանայ և որդւոյ նորա և ոչ գտին։ Ապա զհետ փախստէիցն մտեալ խնդրէին, և հայեցեալ տեսին զնոսա գահավիժեալս[3]։ Ապա միաբանեալ աբարին իւրեանց իշխան զՄիհրխոսրով. և բարկութեամբ լցեալ, ռազմ կարգեցին։

Իսկ Սմբատ զՎահան կողմնապահ էր թողեալ 'ի գիշերին չորեքհազարաւ. և երկու հազար 'ի դարանի կացուցեալ ընդ երկուս դեհս։ Եւ ինքն զայլ զօրսն ռազմ կարգեաց, և ետ զայլ թիւն Վարազայ իշխանին Պալունեաց. զի այնչափ հզօր էր, որ մարդոյն քան զմինն այլ ոչ կրկնէր։ Եւ զահեակ թիւն տայր իշխանին Հաշտենից, և ինքն թողու իւր թիկնապահ զՎարազայ[4] որդին զՎահան[5]։

Եւ գումարեցան ընդդէմ միմեանց, և եկին առ միմեանս Միհրխոսրով և Սմբատ, և սկսան հարկանել

1 Օրինակ մի յայլ զօրքն։
2 Օրինակ մի ի վայր ընուլ ընդ փարագլուխն։
3 Օրինակ մի Ռեռէալս։
4 Յերիս օրինակս զՎարազայոյ որդին։
5 Օրինակ մի Ե ի Ռիկոռնս Բողս զՎահան զՎարազայ որդին։

զգլուխս իրերաց։ Եւ դիմեաց զօրն Պարսից 'ի վերայ Սմբատայ իբրև զմեղու, և սկսաւ պակասել Սմբատ, քանզի այր ծերացեալ էր. ձայն բարձեալ ասէր. Ո՞ւր ես վահան որդեակ, հասիր։ Եւ նորա ձայն արկեալ 'ի սուրբ Կարապետն, ասէր. Ահա ժամ[1], ով Մկրտիչ Քրիստոսի Կարապետ Յովաննէս. ուր են իմ՝ սուրբ կըրօնաւորացն աղօթքն։ Եւ մտեալ յառաջն, ցրուեաց զժողովեալսն 'ի վերայ հօրն իւրոյ. և Սմբատայ ոգի առեալ, ածեալ զսուրն և եհար զուսն, և թիկնախառն 'ի վայր ընկէց զգլուխ աւագի նոցա. և սուր 'ի վերայ եդեալ փախստական արարին, մինչև 'ի դարանն։ Իսկ դարանակալքն յարուցեալ, 'ի մէջ առին զնոսա. և բազմաց կորուստ եղև այն օրն, և չորեք հազար գլուխ համարով ընկեցին ընդ քարն, որ կոչեցաւ Հոնընկէց[2]։ Եւ ժամանեաց նոցա երեկոյ, և զօրքն Պարսից փախըստական եղեալ՝ իջին 'ի Հաշտեանս ութ հազար այր. և անդ հանդէս արարեալ զօրացն, և կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Հանդիսեանք. և խաբանօք կամէին գնալ յԱպահունիս։

Իսկ Սմբատայ իմացեալ եթէ գնացին, յարուցեալ մտին զհետ նոցա, և 'ի վաղիւն հասին։ Եւ իբրև բանակեցան առ իրերօք, խորհեցան սոքա գնալ 'ի վերայ Պարսիցն, և կազմեցան առ երիկունն[3]։ Եւ դեռ սոքա յայս էին, եկին հասին զօրք յԱպահունեաց իբր երեք հազար. և տեսին զօրքն Հայոց՝ զի խառնեցան 'ի պարսիկս զօրքն Ապահունեաց, լքան և յերկիր կործանեցան. և հնարս իմացեալ, ընդ Մարկուց[4] փողն 'ի վայր գնացին յեզր Արածանոյ, և անդ բանակեցան։ Իսկ պարսիկքն յարուցեալ զհետ մտին նոցա, և տուեալ գետոյն՝ նեղէին զնոսա։ Իսկ Սմբատայ զամենայն զյոյսն իւր յաստուած արարեալ, ասէ. Ո՞վ տէր, գիտեմ զմարդասիրութիւն քո առ մեզ զվաղընջուց. և այժմ տես զմեզ, զի ատի թշնամիքն, և անտի գետն. և արդ

1 Օրինակ մի ժամ օգնականի, ուր էն իմ։
2 Օրինակ մի չունի որ կոչեցաւ Հոնընկէց։
3 Օրինակ մի կամէին առ երեկոյն։
4 Յերկուս օրինակս ընդ Մարգոյ փող։ Ի միւս այլ Մարկոց փող։

հայեաց 'ի մեզ, եթէ զիարդ թշնամիք նեղեն զմեզ[1]։ Եւ կնքեալ զանձինս իւրեանց, դիմեցին 'ի վերայ Պարսիցն։ Եւ երևեցաւ նոցա 'ի պատերազմին այր մի ահեղ և լուսաւոր, և հեր նորա ելոյս փայլատակէր[2]։ Զոր տեսեալ վահանայքաջի, և գիտացեալ՝ թէ Կարապետն է[3], խնդացեալ յարձակեցաւ 'ի վերայ նոցա. և կտրեալ զզօրսն երեքհազար, և եդեալ առաջի և տարաւ անցոյց ընդ Ատղօնս, և պատեալ ի ջոյց զնոսա մինչև հանդէպ եկեղեցւոյն[4], որք կամէին ելանել 'ի նոյն տեղին, և զկրօնաւորսն սպանանել։ Իսկ զօրութիւն տեառն արգել զնոսա, և ոչ կարէին անցանել ընդ ձորն, յետս զգեանի դիպելով, զոր սովորեցան ցեռասանկ[5] կոչել տեղոյն։

Իսկ զօրքն եկեալ հասին յանտառն, որ հանդէպ վանացն հայի. և անդ թագեան։ Իսկ վահանայ աճապարեալ գնայ անդ, և սուր 'ի վերայ եդեալ՝ կոտորէր զնոսա. և ոչ մնաց յիշատակ անգամ, և կոչեցաւ տեղին այն՝ Մահու առիթ։ Եւ խիստ վաստակեցաւ Սմբատ յաւուրն յայնմիկ. բայց 'ի թիկունս եհաս նմա վարազ իշխանն Պալունեաց, և առաջի եդեալ զզօրսն գետավէժ առնէին, մինչև եկին 'ի տեղին՝ զոր այժմ Կուրայ[6] կոչեն։ Եւ որք 'ի փախուստն երթային, կացին երիվարքն նոցա. և Պալունեաց իշխանն բազում զօրօք զհետ մըտեալ, կոտորէին։ Եւ իբրև անդ եկին, ասէ վարազ ցպարսիկսն. Զի սպառեցաք, փախիք՝ որ մեք կոտորեմք։ Եւ նոքա ասեն. Կորեաք մեք և մեռաք։ Եւ կոչեցաւ անուն տեղւոյն Կուրայ. և 'ի նոյն տեղւոջն սկըսաւ մի մի ունել զնոսա, և զթլփատսն կտրեաց. և էին համարով հազար վեցհարեւր և ութսուն։ Իսկ այլք մնեալք 'ի գետն խեղդեցան արք երկու հազար։

Իսկ զոր Սմբատ կոտորեաց, գունդն այն անցեալ

1 Օրինակ մի չունի Ե արդ հայեաց ... որ նեղէն զմեզ։
2 Օրինակ մի Ե հերք նորա որպէս լոյս փայլատակէաւ։
3 Օրինակ մի չունի Ե գիտացեալ թէ Կարապետն է։
4 Օրինակ մի հանդէպ ինանինեան փեղոյն.
5 Ի միում օրինակի Ցեռանգ. յայլում Աղգան. և 'ի միւսում Աղգան։
6 Ցերկուս օրինակս Կուրան։

յայնկոյս ընդ Հովհաննս 'ի վերայ փախստականացն ընդ լեառն, իսկ արք ամրոցին ելեալ զկնի՝ նետիւք և պարսաքարամբք և գլոք կոտորեցին արս երկու հազար և ութհարեւր։ Եւ որք ապրեցան՝ էին արք հազար և քառասուն. որք փախուցեալք գնացին 'ի պարսիկս առ Խոսրով։ Եւ նա այլ զօրս առաքեաց 'ի Տարօն։

Ի սոյն ամի վախճանեցաւ Սմբատ, և եհ տանել զինքն 'ի տապանատուն հարցն իւրոց 'ի վանսն Գլակայ. և կայ 'ի դուռն սրբոյն Ստեփաննոսի, զոր շինեաց Ստեփաննոսն այն՝ որոյ մայրն հերձաւ, և եդ 'ի նշխարաց սրբոյն Ստեփաննոսի անյայտս զձախ բոյթ ոտին սրբոյ նախավկային։ Եւ 'ի նոյն ամի փոխմանն Սմբատայ՝ փոխեցաւ հայրն Եպիփան առ աստուած յետ քսան ամի. և նստաւ յաթոռ նորա Դաւիթ ամս երիս, որ է քսանևերրորդ 'ի սրբոյն Գրիգորէ։ Ի սոյն աւուրս կնքեցաւ վահանայ որդին Տիրան 'ի վանս Գլակայ 'ի սուրբ կաթողիկեն, 'ի հայրապետութեանն Դաւթի։

ՊԱՏՃԷՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վասն գալոյն Վարդուհրայ, և մեռանելոյն 'ի Փանդիկաւ[1] յիսուն հազար արամբք յեզր Արածանոյ։

Եւ եղեւ յետ ութուտասն ամին, դարձեալ գժտութիւն[2] եղև ընդ պարսիկս և ընդ Վահան. և առաքեաց Խոսրով զօրս 'ի վերայ Տարօնոյ, հինգ բեւր և վեցհարեւր։ Որք բազում սրտմտութեամբ եկեալ հասանէին 'ի Տարօն, և կամէին անցանել 'ի վանսն Գլակայ, զի հանցեն զոսկերս թշնամեացն. և եկեալ բանակեցաւ 'ի Մուշ։ Իսկ Վահան կոչեաց զորդին իւր զՏիրան քաջ, և ասէ. Որդեակ, մի՛ վասն զի 'ի մեծութեան ես՝ պատրիս 'ի մեղայ, և մի՛ վասն զի մանկիկ ես՝ խաբիր 'ի գեղկանանց. այլ յիշեա զքո հարսն, որքան սրբութեամբ

1 Ցերկուս օրինակս Փադիկաւ. և 'ի միւսն Փանդիկ։
2 Ցերկուս օրինակս դժբոնիւն։

և ամբծութեամբ ծառայեցին աստուծոյ։ Մի՛ մոռանար զծառայութիւն սրբոյ Կարապետին, զի 'ի պատերազմունս նա էր՝ որ օգնէր մեզ. այլ եթէ շատակեաց կամիս լինել 'ի պղծութենէ մի՛ պատրիր, որպէս և չես իսկ։ Եւ եթէ ես մեռանիմ 'ի պատերազմին, զիս 'ի մեր վանսն տուր տանել։ Եւ դու ծառայեա աստուծոյ և կրօնաւորաց նորա սրբութեամբ, որպէս և ես ծառայեցի. զի ոչ պատրեցայ 'ի գեղոյ, և ոչ զրկեցի և ոչ նեղեցի զտառապեալս. քանզի զամենեսեան՝ որք ընդ իմով իշխանութեամբ էին, զարս և զկանայս և զմանկտիս, զհաւատացեալս 'ի Քրիստոս, իբրև զեղբարս և զընտանիս տան իմոյ հոգայի խնամով որպէս հարքն իմ։ Որդեակ, զնոյն և դու արասցես, և տէր զօրացուսցէ զքեզ։ Արդ գնամք 'ի պատերազմ։

Եւ գնացին 'ի պատերազմ. և արձակեցին առ Հայրն Գրիգոր, որ քանեհինգերորդն էր, և նստաւ յաթոռ հայրապետութեան ամս ութ. և տարան 'ի պատերազմ երեքհարեւր ութսունեհինգ կրօնաւոր կնկղով։ Իբրև խմբեցաւ պատերազմն յեղերս Արածանոյ առ անտառոմն որ կոչի Կաղամախեաց[1] բլուր, կրօնաւորքն սեաղգեստք էին մաշեղինօք և կնկղաւորք, և ընդ տասն առնն ժամահար մի, և ընդ երկուսն խաչադրօշ բարձրաբուն[2], և ճակատեցան նոքա ընդդէմ իրերաց 'ի պատերազմ՝ յայնկոյս գետոյն որ 'ի դաշտին. զոր տեսեալ թշնամիքն զարմանային։ Եւ Վարդուհրի ոչ եմուտ 'ի պատերազմ. այլ տեսից, ասէ, թէ նոքա զինչ գործեն։ Եւ իբրև խմբեցաւ պատերազմ ընդ իրարս, և կամէին փախչել վահանեանքն, յայնժամ նոցա ծունր կրկնեալ՝ միաբան աղաղակեցին առ աստուած աղօթիւք և լի արտասուօք. Ով տէր, հար զմեր պատերազմն. ով Կարապետ, զարթիր 'ի ձայն պաշտօնէիցս։ Եւ զայս ասացեալ միաբան՝ յոտն կացին, և զնշան խաչին դարձուցանէին 'ի վերայ թշնամեացն. և հարին զժամահարսն յանդուգն։

1 Յերկուս օրինակս Կաղամախեաց. իսկ յերիսն Կաղամանէաց։
2 Յերիս օրինակս Ի տան կրօնաւորն ժամահար մի, նոյնպէս Ի յոտն խաչ մի նշանակաւ։

Եւ հայեցեալ Վահանայ 'ի գունդ կրօնաւորացն, ետես յայլ թեւս նոցա երիտասարդ մի՝ ահագին տեսլեամբ, և թագ ծիրանի 'ի գլուխ նորա և խաչ. և 'ի հանդերձից նորա հուր փայլատակեալ։ Եւ այլ երկուս երիտասարդական հասակաւ տեսանէր, որք առաջի կային թեւաւորք։ Զոր և թշնամեացն տեսեալ՝ յիմարեցան, և 'ի գետ անդր լցան. և որք 'ի գետոյն յայն կոյս անցին, Մեղտայ ուշ արարին։ Իսկ Վահան ձայն տուեալ յորդին իւր Ցիրան և յայլ զօրսն, և ասէ. Ահա տէրն արարածոց Քրիստոս երևի 'ի մէջ ծառայից իւրոց. զի նա է թագաւոր նոցա և մեր ամենեցուն, որ խոնարհեցաւ 'ի ձայն պաշտօնէից իւրոց, և էջ 'ի փրկել զնոսա և զմեզ. արդ պնդեսցուք զկնի թշնամեացն։ Իսկ անօրինացն հասեալ 'ի Մեղտի, և գտին երկոտասան ծեր 'ի կրօնաւորացն, և սպանին զնոսա. որք թաղեալք կան 'ի դուռն եկեղեցւոյն, զի այն իսկ էր խնդրուածք նոցա։

Իսկ Վահան մտեալ 'ի գետն, կապեաց զերիվարն 'ի վերայ ողին հանդերձ զինաւն, և անց յայնկոյս 'ի գեւղն՝ զոր Պարսից դէմն[1] կոչեն։ Եւ անդ ժողովեցան ամենայն զօրքն Վահանայ. և կրօնաւորքն 'ի նոյն տեղւոջն աղօթէին մինչև եհաս առ նոսա հայրն, որ ունէր զգլուխն Վարդուհրայ աւագի նոցա։ Իսկ Վահանայ վանեալ զզօրսն, և հասեալ 'ի դաշտն՝ որ 'ի վերայ Մատրավանից, և բոլորեալ ռազմ կանգնեցին։ Եւ եկեալ առ միմեանս Վարդուհրի, և Ցիրան՝ որդին Վահանայ, ասէ Վարդուհրի. Կախարդասարք, դուք 'ի կախարդն էք պանծացեալ, և կախարդութեամբ կամիք յաղթել Պարսից քաջաց։ Ասէ Ցիրան. Եթէ կախարդք եմք՝ դու վայր մի անսա՝ զի ես զքո ձիոյ ագիդ քեզ տեսանել տամ։ Եւ աճապարեալ 'ի բաց ձգեաց զաջոյ ոտն սռնապանքն հանդերձ. և նորա հակեալ յայնկոյս անկաւ։ Ասէ Ցիրան. Վարդուհրի, մի մեղադրեր. գլուխդ հակեաց և ընկէց զքեզ. արդ ուղղեմ զքեռնդ։ Եւ ապա բառնայ. և կտրեալ զգլուխն ետ ցծառայ մի, և ասէ. Պահեա զդա, որ ի Մատրավանս և գնդի խա-

1 Ցերիս օրինակս Պարսից կողմ։

զամբ առաջի սուրբ կարապետին. զի դա էր, որ նախա-
տէր զպաշտօնեայս նորա։

Եւ 'ի մէջ առեալ զզօրսն Պարսից, և սկսան փանդա-
նել[1]. զի իշխանն Պալունեաց կտրեաց երկու իշխանս,
և եհան զնոսա մինչև 'ի Հաշտեանս։ Եւ իբրև էհաս 'ի
տեղի մի դաշտաձև, պակեաւ իշխանն փախստական
մինչ դեռ զօրքն հեռի էին, և ոչ կարաց խուսել կամ
կռուել, այլ այնպէս կայր։ Ասէ մի ոմն 'ի ծառայիցն.
Զի՞ պակեար, ո՛վ իշխան։ Եւ նա ասէ. Պաղակ իշխան
տեսանեմ, և ոչ կարեմ գնալ։ Բայց ոչ կարացին գիտել,
թէ զինչ էր բանն, և անդէն մեռաւ։ Իսկ նորա կտրեալ
զգլուխն, և առեալ զերկու իշխանորդիսն՝ զորս եկալ,
և ետ պահել. և ինքն գնաց զհետ փախստէիցն։ Եւ հա-
սեալ միւս իշխանին, ասէ Վարազ. Անկիր պարսիկ կա-
մաւ, ապա թէ ոչ՝ անկանիս ակամայ։ Եւ նա փախեաւ.
և Վարազ զհետ մտեալ, էհար զտէգն 'ի թիկունս նորա,
և անցոյց ընդ ողն երիվարին, և ասէ. Այժմ անկանիս։
Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Ներքինանկնիս։

Եւ սակաւ մի գնացեալ՝ էհաս միւս այլ իշխանին և
ասէ. Անկանի՛ս կամաւ, իսկ եթէ ոչ՝ անկանիս ակամայ։
Իսկ նա ընդդէմ դարձաւ, և կտրեաց զգլուխ երիվարին
Վարազայ, և ընկէց։ Իսկ նա 'ի վայր վազեալ, և էհար
զՍիլս երիվարին պարսկին, և ասէր. Անկիր և դու։ Եւ
անուանեցաւ տեղին այն Վայրանկանիս։ Իսկ այնք՝ որք
'ի Պուղկն էին մնացեալք, առեալ զերկու իշխանորդիսն,
և զգլուխս այնր իշխանին՝ որ պակեաւն, բերին առ
Վարազ. և կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Պուղկ[2]։
Եւ դարձաւ Վարազ առ Սմբատ որդին իւր, և իջին առ
Վահան. և նա կոտորեալ էր զբաղումս, և վաստա-
եալ էր յոյժ։ Եւ փախուցեալք ընդ երեսս դաշտին
փախստեայք լինէին, և անուանեցաւ տեղին այն
Փանդիկ[3]։

Իսկ կրօնաւորացն դարձեալ գային 'ի Կաղամախեաց[4]

1 Յայլսմ օրինակի ֆանդանդէլ. իսկ յերիս օրինակս Ն պապեցին զզօրսն Պարսից Ն սկսան ցրուել 'ի Ռմբանց։
2 Յերկուս օրինակս Պուղ. և 'ի միւս այլ Պուղակ։
3 Յերիս օրինակս Փոյադիկ։
4 Օրինակ մի ի Կաղմախեաց։

բլրէն, եկին ելին 'ի բլուր մի, որ հայի ընդ դաշտն Մատ-
բավանից[1], անկան առ նոսա գունդ մի պարսիկ փա-
խըստական[2]. և աղաչէին զկրօնաւորսն՝ ապրել[3]։ Իսկ
իբրև եկին այլ գունդք իշխանին Հաշտենից, ասեն.
Ո՞ւր են պարսիկքն, որք գային զհետ փախստէիցն. և
ոչ ետուն կրօնաւորքն զպարսիկսն 'ի ձեռս նոցա։ Եւ
եկեալ իշխանին Հաշտենից, ասէ. Զի՞ եղեն պարսիկքն։
Եւ նոքա ասեն. Աւասիկ են ընդ Հայերոյդ[4]։ Եւ կոչե-
ցաւ անուն տեղոյն Հայկերա[5]։ Եւ ապա դադարեաց
պատերազմն. և զփախուցեալսն դարձուցին 'ի Մեղտի,
և գտան համարով արս չորեքհարեւր և ութսուն. և
տուեալ նոցա գանձս և երիվարս՝ արձակեցին 'ի պար-
սիկս, լինել զրուցատարս սքանչելեացն՝ որ հանդիպե-
ցաւ 'ի կրօնաւորացն նոցա։

Վճար եղև պատերազմին Յարօնոյ 'ի հինգ առաքինի
իշխանացն, Մուշեղայ, Վահանայ, Սմբատայ, Վահա-
նայ կամսարականի, և Յիրանայ։ Որոց յիշատակն օրհ-
նութեամբ եղիցի[6]։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վասն գիտելոյ զպատճառս Միծառնեայ խաչին, թէ յումմէ բերաւ, և կամ թէ ո՞րպէս կայ 'ի Միծառնէ, և կամ յո՞ր ժամանակի գոր-
ծեցաւ։

Ընդ ժամանակս թագաւորութեանն Հերակլեայ զո-
ւրացաւ խոսրով Պարսից արքայն, և գնաց մինչև յերու-
սաղէմ. զքաղաքն աւերեաց, և զկտակարանն այրեաց,
և զսուրբ խաչն գերեաց, և առեալ գնաց 'ի պարսիկս,
եդեալ 'ի պահեստի զսուրբ խաչն հանդերձ սպասուքն

1 Օրինակ մի Ա էկին ի բլուր մի որ հանդէպ գեղջն։
2 Օրինակ մի չունի պարսիկ փախստական։
3 Օրինակ մի աղաչէին զի մի գացէ սպանանել զնոսա։
4 Օրինակ մի էն առ հայէարդ։
5 Ի չորս օրինակս Հայրկերա։
6 Օրինակ մի չունի զվերջին հատուածն Վճար... եղիցի։

մինչև յեւթն և 'ի տասն ամի թագաւորութեանն իւրում։ Եւ զօրացաւ Հերակլ 'ի թագաւորութեանն իւրում, գնաց 'ի պարսիկս, և եսպան զԽոսրով, և դարձոյց զսուրբ խաչն՝ հանդերձ գերեօքն։ Եւ ընդ բազում օթևանօք զանց առնէր, տուեալ մասունս բազումս Հայոց աշխարհին և մեծամեծ իշխանացն։ Իբրև գնաց յԵրեզնաւան, կորեաց սպասաւորն մեծ մասն մի 'ի գիշերին, և կամէր փախչել։ Իսկ մի ոմն իմացեալ, ազդարար թագաւորին. և նորա առեալ զմասնն 'ի նմանէ, և կորեաց զգլուխ նորա. և եղեալ զօրօքն գնաց 'ի Կեսարիա, և եւ զմասնն հայրապետին Կեսարու, որ կոչիւր Յովհան. և ինքն գնաց 'ի թագաւորաքնակ քաղաքն Կոստանդինուպոլիս։ Եւ 'ի նոյն ամի գնաց Վահան կամսարական 'ի Կեսարիա, և եւ երեսուն և վեց հազար դահեկան հայրապետին Յովհաննու, և առեալ զխաչն եբեր 'ի վանս Գլակայ 'ի սուրբ Կարապետն, և եդ 'ի դարանն՝ որ 'ի վերայ սրբոյ սեղանոյն. և եկաց անդամն վեց։

Իսկ իշխանն Արջուց կողմանն Գորգ Շատախսօս, որ կոչեաց զանուն գաւառին իւրում Շատախ վասն աւելի անուան իւրում, սա եկն 'ի դաշտն Ցարօնոյ առ այր մի՝ որոյ անուն էր Ծիծառնիկ. որ չինեաց փոքր աւան, և եդ անուն նմա Ծիծառն։ Աղաչեաց իշխանն զԾիծառնիկ՝ եթէ հնարեա և գողացիր զխաչն, զի եկեղեցպանն քո ազգական է։ Բեր զխաչն և տուր ինձ, և առ յինէն վեց հազար դրամ։ Իսկ նա ասէ. Դրամն քեզ, զխաչն առնում, և գամ յերկիրն քո. և ընտրեմ ամուր տեղի, և չինեմ աւան. և զիմանուն գնեմ։ Եւ յանձն կալեալ[1] իշխանին, գնաց 'ի տուն իւր. իսկ Ծիծառնիկն զկինն և զորդիսն և զազգատոհմն իւր յղեաց առ իշխանն Արջուց, և ինքն եկեալ ծանոյց զիրսն եկեղեցպանին։ Եւ նորա յանձին կալեալ՝ իջոյց 'ի պահարանէն, և գնացեալ զհետ նորա յերկիրն իշխանին՝ ընտրեաց տեղի, և չինեաց եկեղեցի. և անդ եդին զաէրունական սուրբ նշանն, և անուանեաց զաւանն Ծիծառն։

Եւ ընդ այն ժամանակսն ներսէս Հայոց կաթուղի-

1 Օրինակ մի յանձին կալեալ։

կոս, որ'ի Տայոց էր ծննդեամբ, այն՝ որ զվաղարշակերտոյ սուրբ Աստուածածինն շինեաց, եկն վասն սուրբ խաչին տեսութեան։ Իսկ Վահանայ առեալ զկաթուղիկոսն, եկն 'ի վանսն Գլակայ. և խնդրեաց զսուրբ խաչն։ Իսկ սպասաւորացն խնդիր արարեալ, ոչ գտին։ Սուգ առին իշխանքն և կաթուղիկոսն և եպիսկոպոսունքն, և եւթն օր Վահան ոչ եկեր և ոչ էարբ։ Եւ յայտնեալ նմա մինչ գեռ ննջէր 'ի դրունս եկեղեցւոյն յաւուր ուրբաթու, ետես ինքն իշխանն Վահան, զի այր ոմն լուսաւոր ընդ սեամն եկեղեցւոյն յայս կոյս եղեալ, ասէ ցնա. Զիս կողոպտեցին, և զԱրջք շինեցին. արդ թոյլ տուր, զի երկիրն այն ամուր է, ոչ կարեն անտի գողանալ։ Իսկ նորա[1] լի եղեալ խնդութեամբ, զարթեաւ. և ընթացեալ՝ աւետիս տայր կաթողիկոսին, եթէ խաչն 'ի յԱրջքն է։ Եւ խնդացեալ յոյժ՝ 'ի վաղիւն տօն ցնծութեան կատարեցին, և յարուցեալ գընացին 'ի տեղին. և կալեալ զկրօնաւորն՝ որ զխաչն էր գողացեալ՝ ետ զկաթուղիկոսն, և հանել ետ զերկոսին աչս նորա՝ որ զի կողոպտեաց զսուրբ կարապետն։ Եւ կալեալ Վահանայ զԾիծառնիկ, էհատ զգլուխ նորա։ Եւ զիշխանն Արջուց եդեալ յՈղկան. մինչև էառ 'ի նման՝ հարեւր հազար դահեկան[2], և ապա շինեաց զեկեղեցին՝ որ 'ի վերայ բլերն Մշու՝ յանուն որդւոյ իւրոյ կրտսերի Ստեփաննոս, որ կայ 'ի նոյն դուռն թաղեալ։ Իսկ զխաչն ետ Վահան 'ի ձեռն եպիսկոպոսին Արջուց. և նա իսկ կացոյց քահանայս եւթն 'ի վերայ եկեղեցւոյն, զի յամենայն ամի մինն ունիցի. և վեց հազար դրամ՝ կարգեցին նոցա տալ Հայոց 'ի Տարօնոյ[3]։

Արդ զայս պատմութիւնս գրեալ եդին յեկեղեցին Ծիծառնեայ[4]. և եղև այս 'ի թուականութեանն Հայոց հարեւր և երեսուն, և Հռոմին չորեքհարեւր քսան և եւթն. զոր ստուգիւ գրեալ զեղեալ պատմութիւնն,

1 Օրինակ մի Վահանայ։
2 Օրինակ մի չունի և ապա շինեաց... և էգ զխաչն։
3 Օրինակ մի Իշխանին Տարօնոյ։
4 Օրինակ մի Ծիծառնէոյ։

եդին 'ի Գլակայ վանան 'ի սուրբ Կարապետն, հրամանաւ Ներսիսի Հայոց կաթուղիկոսի՝ որ քսանեւիններորդ[1] էր 'ի սրբոյն Գրիգորէ, և յիշխանութեանն Վահանայ մամիկոնենոյ։ Երեսուն և երկու իշխան նըստեալ է 'ի Մուշեղայ մամիկոնեան ցեղին. սա եկաց իշխան 'ի Տարօն ամս երեսուն, և մարզպան ամս տասն։

Վասն մահուան Տիրանայ՝ որդւոյ Վահանայ, և պատերազմին՝ որ յեզերս Աղի ծովուն։

Յետ այսքան պատմութեան զրուցատրութեանց, սուգ ժամանեաց խաղաղարնակ երկրիս մերում։ Զի Վահան յաւելեալ առ հարսն իւր, մեռանի. և կայ թաղեալ 'ի դուռն սրբոյ Կարապետին, կացեալ իշխան Տարօնոյ և Ասպահունեաց ամս երեսուն։ Բայց որդի նորա Տիրան հրամանաւ Վաշդենայ Վրաց իշխանին և հօր իւրոյ Վահանայ գնաց 'ի դուռն Խոսրովայ, յառաջքան զգնալն Հերակլի 'ի պարսիկս. և եղեալ Խոսրովայ ընդ որդեգիրս, լեալ մարզպան Հայոց, առնու զօր բազում, և գայ 'ի վերայ Յունաց որպէս թէ 'ի պատերազմ։ Բայց յղէ 'ի կայսրն, թէ մի ինչ երկնչիր յիմոյ գալոյս. այլ տուր ինձ քաղաք մի, զի ժողովեալ զզօրս Հայոց, և մնացից քեզ 'ի թիկունս։ Իսկ նա ուխտ սիրոյ դնէր 'ի միջի, ոչ միայն մարզպան Հայոց և Պարսից համարեալ՝ այլ և դիմէալեկոս[2] առնել բովանդակ Հոռովմոց։

Զայսոսիկ լուեալ Վաշդեան Վրաց իշխանն՝ առաքեաց առ Խոսրով, եթէ նենգեաց քեզ Տիրան, և եղև ընդ Յոյնս. արդ առաքեա ութ հազար այրուձի ընդ Վանանդ, և ես տաց զնա 'ի ձեռս քո։ Իսկ թագաւորն կոչեաց զՁոլիկ զՎրաց իշխանորդին, և արար մարզպան. և զՍիւնեաց իշխանն ձեռացկոծ[3] տայր հանել

1 Օրինակ մի քսանեւերորդ երրորդ էր։
2 Օրինակ մի դիմելեկոս։
3 Օրինակ մի յեռակոծ։

որպէս զնենգաւոր և զխաբօղ ազգ։ Եւ առաքեաց ինքն առ Վաշտեան զօր հինգ հազար. իսկ Վաշտեան գրեալ թուղթ առ Տիրան այսպէս. Նեղացար պանդըխտութեամբ, արդ արի եկ՝ զի խորհեսցուք ինչ վասն արքայի։

Իբրև ընթերցաւ զթուղթն[1], 'ի նոյն աւուր եկն թուղթ մի 'ի Համամայ քեռորդւոյն Վաշդենայ, ծանուցանել զնենգութիւնն՝ որ ինչ առաջի կայր 'ի զօրացն եկելոցն 'ի Պարսից։ Եւ նորա վաղվաղակի թուղթ գրեալ 'ի Վաշդեան, յամօթ առնելով վասն ծածուկ իրացն։ Եւ բարկացեալ Վաշդեան, ետ ածել զՀամամ՝, և ծայրատել զոտս և զձեռս նորա։ Եւ առեալ զպարսիկս՝ էանց ընդ գետն Ճորոխ[2], և գնաց 'ի քաղաքն Համամայ՝ որ կոչի Տամբուր. էհար սրով և հրով, և գերեաց զքաղաքն։ Իսկ սուրբ եպիսկոպոսն քաղաքին Մանկնոս անիծեաց[3] սատանիկ զիշխանն. և նորա հրաման տուեալ պարսկացն՝ կոտորել զքահանայսն յեկեղեցին որ կոչի սուրբ Սիոն։ Իսկ եպիսկոպոսն աղօթեալ առ աստուած լռութեամբ, միայն զայս հանեալ 'ի լոյս՝ թէ եղիցի քաղաքս խոպան և աւերակ, և ոչ ոք իցէ որ բնակիցի 'ի սա յաւիտեանս յաւիտենից[4]։ Եւ արկեալ զինքն 'ի վերայ սեղանոյն, զենին զնա յաւուր Պենդակոստէին յառաջ քան զՔրիստոս պատարագելն։ Եւ 'ի միւսում աւուրն[5] ճայթեալ ամպոյ երկնից, հրայրեաց արարին զնա մինչ նատէր առ դուռն քաղաքին Տամբուրայ։ Զայս յետոյ շինեաց Համամ, զիւր անուն գնելով Համամաշէն։ Եւ 'ի գլուխ եալ աղօթք Մանգնոսի. զի երիքհազար այր 'ի միւսում գիշերի սատակեցան, և այլքն փախեան, և քաղաքն աւեր մնաց[6]։

Ապա 'ի սոյն ամի ելանէ Հերակլ, և սպանանէ զԽոսրով. և յիշեաց զերդումն՝ զոր ընդ Տիրան և ընդ

1 Օրինակ մի յաւելու Տիրան։
2 Օրինակ մի Ճորխ։
3 Օրինակ մի անիծեալ։
4 Օրինակ մի չունի զհատուածդ. Իսկ Եպիսկոպոսն աղօթեալ... յաւիտենից։
5 Օրինակ մի Եւ 'ի վաղիւն դիսուամ.
6 Օրինակ մի չունի Զայս յետոյ շինեաց... աւեր մնաց։

ինքն, և կացուցեալ մարզպան ամենայն Հայոց, և ինքն գնաց 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ յետ ութ ամի եկն Աբդռահիմ քեռորդի Մահմետի բազում աղխիւ, ութ-հատասն հազար առնևձիոյ ընդ իւր բերեալ, խնդրէր հարկս 'ի Հայոց։ Իսկ Տիրան արձակեաց՝ ժողով լինել համարէն զօրու 'ի պատերազմ։ Զոր դիպող ժամանակ գտեալ իւր՝ որդին Վաշդենոյ Զոլիկ Վրաց իշխանն, ապստամբեցուցանէ զբովանդակ[1] Հայք չերթալ առնա։ Զայս տեսեալ Տիրանայ թէ ամենայն ինչ 'ի վերջ հասեալ է, եդ զայս բանս առաջի զօրաց իւրոց ութ հազարաց՝ որք կամաւ էին եկեալ, թէ ով Քրիստոսի ժողովուրդք, լաւ է ինձ մեռանել՝ քան եկեղեցի աստուծոյ հարկատու լինել Տաճկաց։

Եւ 'ի վաղիւն ժողովեալ 'ի ստորոտն Գրգռոյ՝ որ ընդ հարաւոյ դաշտ անդ խմբեցան յառաւօտէ մինչև յերրորդ ժամն։ Դեռ ևս փախստեայ էին արարեալ զտաճկաստանն, իսկոյն իշխանն Անձաւացեաց[2] ապըստամբեալ 'ի դուրս ելեալ, և սուր 'ի վերայ Հայոց զօրուն դնէ։ Իսկ Տիրան պատառեալ զերկու ռազմն, պատահեցաւ[3] Սահուռայ, և ասէ. Կաց ուրացեալ Սահուռ, զի ըմբռնեաց զքեզ Քրիստոս 'ի ձեռս իմ։ Եւ ձգեաց զգլուխն Սահուռայ սրով, և ինքն անդէն պասկեցաւ սրով երկու իշխանաքն։ Եւ ապա 'ի մէջ առեալ զզօրսն Հայոց, ամենեցուն զկատարած կենաց հատուցանէին։ Իսկ ոմանք փախստեայ լեալ, անցանէին հանդէպ մօրաթաթախ[4] Օձքաղաքի։ Եւ կոտորեալքն 'ի Պարսիցն[5] կան 'ի պահեստի ընդ վկայարանաւն, և վերակոչի անունն Սուրբ Բանակ։ Իսկ Աբդռահիմ անցանէ ընդ Հարք և 'ի Բասեան, 'ի Վիրք և 'ի Ջախվախս[6] և 'ի Վանանդ. և առեալ հարկս, դառնայ 'ի տաճկաստան։

Ի սոյն ամի քակի եկեղեցին, որ յԱշտից վանն[7]

1 Օրինակ մի զԲոլոր։
2 Օրինակ մի յաւելու Սահուռա։
3 Օրինակ մի պատահէաց։
4 Յօրինակն մօրաթախ։
5 Օրինակ մի ի տաճկաց։
6 Օրինակ մի ի Ջաւախս։
7 Օրինակ մի որ յԱշտիշատի վանն։

հիմնարկեալ 'ի սրբոյն Գրիգորէ. և կարապետն յիննա-կնեանսն, և Մատրավանն 'ի Տարօն, և մեծ կաթուղիկէն յԱստղաբերդ, և Ներսիսի հայրապետի[1] կաթուղիկէ եկեղեցին 'ի Թիլն յեկեղեաց գաւառն։ Եւ մարզպանն կայ թաղեալ 'ի դուռն կաթուղիկէին 'ի Զիւնկերտ Տարօնոյ 'ի Պորպ քաղաքի։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ժամանակագրութիւնս այս սկսեալ առ սրբով Գրիգորիւ Զենոբայ ասորւոյ՝ վասն որ ինչ յիւրեան տեղիսն գործեցաւ թողեալ գրով 'ի նոյն եկեղեցին։ Հաճոյ է թուեալ այլոց յետոյ զնոյն պահել զկարգ, միայն որ ինչ իշխան տանս այս առնէր քաջութիւն՝ իւրաքանչիւր հայր գրեալ զիւր ժամանակին անցս թողցեր. և աճեալ, պատմութիւն Ասորւոց կոչի։ Զի այն հարանց անուանքըն, որք գրեալք կան մինչև 'ի Թոդիկ, ամենեքեան Ասորիք էին. և տունն այն ասորի գրով և պաշտամամբ է վարեալ մինչև 'ի Թոդիկ։ Եւ նա փոխեաց զամենայն կարգս, և զԱսորոց ցեղսն լնաւ հալածական արար 'ի վանացն։

Բայց զոր ինչ 'ի Տրդատայ մինչև 'ի Խոսրով արքայ Պարսից լեալ է 'ի տանս մամիկոնենից՝ ոչ գտի գրով։ Ապա տեղեկացայ յոմանց՝ թէ 'ի կողմանս Ուռհայի է կրօնաւոր ոմն Մարմառա[2] կոչեցեալ, և ունի զգիրսդ զայդ։ Գնացի և տեսի առ նմա զգիրսն, որ 'ի նոյն ինն-ակնեան վանսն էր գրած. և նա 'ի զօրաց ուստեք ունէր 'ի Պարսից կամ յայլոց ուրուք, որ ապականեալ զերկիր, և գիրքն կարծեմ թէ անտի է անկեալ 'ի նա։ Եւ թարգմանեալ 'ի նմանէ քան և ութ պատճեան, և տասն՝ որ 'ի գրի առ իս կայր, և բովանդակեալ արարի երեսուն և ութ պատճեան, 'ի մի գիրս հաւաքելով՝ թողի մանկանց եկեղեցւոյ։

1 Օրինակ մի չունի Ե Մատրավանն... հայրապետի։
2 Օրինակ մի Մարմառ։

'Ի ժամանակս թագաւորութեանն Հերակլեայ, և 'ի մահուն Խոսրովու, հրամանաւ Ներսիսի Հայոց կաթողիկոսի, և յիշխանութեան մամիկոնեան վահանայ՝ զոր մայրենեաք կամարական կոչեն, որ երեսներորդ երկրորդ էր 'ի Մուշեղայ՝ զոր քաջակորով կոչեն[1], գըրեալ և կազմեալ 'ի վանան Գլակայ 'ի դուռն սրբոյ Կարապետին, յորում կայ նշխարք Կարապետին՝ բևեռովն յայտնի գոլ,[2] թողի անմոռաց յիշատակ ինձ և իմոցն ես Յովհան մամիկոնեան եպիսկոպոս, երեսներորդ հինգերորդ 'ի Զենոբայ առաջին եպիսկոպոսէն մամիկոնենից, 'ի հայրապետութեանն Սամուէլի՝ որ չորեքամսեան էր նստեալ։[3]

Արդ որք զկնի դոցա այլք նստին վանականք, զոր ինչ գործի յաւուրս նոցա 'ի տանս յայսմիկ՝ գիցէ 'ի նոյն մատեանս[4]. զի այսպէս գտաք օրինադրեալ յառաջնոցն։

Դարձեալ ես տէր Յովաննէս մամիկոնեան եպիսկոպոս, աղաչեմ զմանկունս եկեղեցւոյ աստուծոյ, զի յորժամ զշարադրութիւնս զայս ընդօրինակէք, մի ինչ թուեսցի ծաղր[5] ումեք. այլ և զիմ պատճեանն անպակաս և լի գրով դրոշմեսջիք զհետ գրելեացդ, զի օրհնեալ լիջիք 'ի սուրբ Կարապետէն, և 'ի մեր Ներսեսատ հովուական աղօթից, և բովանդակ իսկ 'ի Քրիստոսէ. և աստուած վարձահատոյց լիցի գրողացդ և ընթերցողացդ. ամէն։

1 Օրինակ մի չուանի որ երեսներորդ... կոչեն։
2 Օրինակ մի չուանի յորում կայ... յայտնի գոլ։
3 Օրինակ մի չուանի ի հայրապետութեանն... նստեալ։
4 Օրինակ մի մատենիս։
5 Օրինակ մի ծանր։

ՎԱԽՃԱՆ

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբգառահիմ 61։
Աբրահամ կաթողիկոս 8։
Աթանաս Գլակայ առաջնորդ 8։
Աղի ծով 59։
Այծից բերդ 38։
Այծատն, փէ՝ Ցեռատանկ։
Այծ տան, փէ՝ Ցեռատանկ։
Անգակ 11. 35. 41։
Անդրէաս Գլակայ առաջնորդ 8։
Անձառացիք 68։
Անտոն և Կրօնիդէս 7։
Աչտից վանք 61։
ԱպահուՆիք 25. 27. 30. 46. 50. 59։
Առաղս 24։
Առինջք 33։
Սուր 32. 34։
Սորիք 40. 62։
ԱստեղուՆք, Աստեղնք, փէ՝ Աստղն ամրոց։
Աստղաբերդ 62։
Աստղն ամրոց 16. 23. 51։
Արածանի 29. 33. 40. 47. 50. 52. 53։
Արգակ, փէ՝ Անգակ։
Արիք, փէ՝ Պարսք։
Արծուիք, փէ՝ Այծից բերդ։
ԱրծրուՆիք 9. 12. 28. 30. 37։
Արձան 16։
Արքք 3. 57. 58։
Արտամետ 13։
Արտից գեղ 40. 41։
Աւետեաց բլուր 7. 9. 29։
Բալխաստան, փէ՝ Բահլ Շահստան։
Բահլ Շահստան 13. 15. 28։
Բասեան 15. 61։
Բարթուղիմէոս Գլակայ առաջնորդ 8։
Բարսեղ Գլակայառաջնորդ 8։
Բաւտր, փէ՝ Բոստր։
Բոստր 30։
Գաշհար, փէ՝ Գահար։
Գահար 15. 33։
Գայլ Վահան, փէ՝ Վահան մամիկոնեան։
Գարհար, փէ՝ Գահար։
Գգռոս, փէ՝ Գրգուռ։
Գիրեհ 47։
Գլակ 7. 8. 9. 12. 30. 33. 52. 57. 59։
Գողոց աղբեւր 41։
Գոմք 13։
Գորգ Շատախօս 57։
Գռէգուռ 32։
Գրգուռ 32. 61։
Գրգռոս, փէ՝ Գրգուռ։
Գրիգոր Լուսաւորիչ 7. 18. 20. 38. 52. 59։
Գրիգոր Գլակայ առաջնորդ 8։
Դաւիթ հայրապետ 52։
Դիմառիոս մի 'ի խոտաճարակացն 20։
Դուին 8. 13. 15. 45։
Եկեղեաց գաւառ 29. 62։
Եղանց բերդ 25. 33։
Եղնուտ, փէ՝ Եղանց բերդ։
ԵՆարկիոս մի 'ի խոտաճարակացն 20։
Եպիփան Գլակայ առաջնորդ 7։
Եպիփան մի 'ի խոտաճարակացն

20. 45. 52:
Երեզնաւան 57:
Երուսաղէմ 56:
Եփրեմ Գլակայ առաջնորդ 8:
Զենոբ Գլակ 7. 62. 63:
Թմբրաձոր 44:
Թոդիկ 9–13. 16. 21. 62:
Ժողովս 42:
Իննակնեան վանք 13. 30. 62:
Խարձ 23:
Խոյթ 13. 16:
Խոսրով Ա. արքայ Պարսից 13:
Խոսրով Բ. արքայ Պարսից 12–15. 28–30. 38. 46. 56–59:
Խոտաձարակք 9. 16:
Միայ ծուէն 28:
Միծառն կամ Միծառնէ 56–58:
Միծառնիկ 57. 58:
Ծմակ 24. 25. 32:
Ծմակ, փէ՝ Ծմակ:
Կախմխեաց բլուր, փէ՝ Կաղամախեաց բլուր:
Կաղամախեաց բլուր 53. 55:
Կաղամանեաց բլուր, փէ՝ Կաղամախեաց բլուր:
Կարապետ, փէ՝ Յովհ. Կարապետ:
Կարին 14. 15:
Կենաց վայրք 45:
Կեսարիա 9. 12. 21. 57:
Կիւրեղ Գլակայ առաջնորդ 8. 12:
Կոթ 26. 29:
Կոմիտաս Գլակայ առաջնորդ 8:
Կոմիտաս կաթողիկոս 8:
Կոստանդինուպոլիս 57. 61:
Կորի 29:
Կուառք 8. 13:
Կուրայ կամ Կուրան 51:
Կրեհ. փէ՝ Գիրեհ:
Կրօնիդէս 7. 21:
Համամ 60:
Համամաշէն 60:
Հայրաբլուր 45:
Հայր բլուր 30:
Հայկերտ 56:
Հայրկերտ, փէ՝ Հայկերտ:
Հայք 8. 13. 14. 28. 29:
Հանդիսեանք 50:
Հաշտեանք 15. 31. 33. 43–46. 50. 55. 56:
Հարցս, փէ՝ Խարձ:
Թադէոս Գլակայ առաջնորդ, փէ՝ Թոդիկ:
Թէոփիլոս մի 'ի խոտաձարակացն 20:
Թիլն աւան 31. 36. 62:
Հովեանք 52:
Հռոմք 58:
Հռիփսիմեանք 8:
Հռոմ 12:
Հռոմք, փէ՝ Հռոմք:
Ձիւնկերտ 62:
Ղիմինդոս 8:
Ճորոխ 60:
Մակար, փէ՝ Մարկոս:
Մահմէտ 61:
Մահու ագարակ 35:
Մահու առիթ 5:
Մահու բլուր 38:
Մամիկոնեանք 9. 46. 62:
Մանդակունի, փէ՝ Յովհ. Մանդակունի:
Մանեայ այր 7:
Մանկնոս 60:
Մատրավանք 12. 54. 56. 62:
Մարիամ կին Վարդայ պաարկի 9:
Մարկոս Գլակայ առաջնորդ 8:
Մարկուց փող 47:
Մարմառա 50:
Մարտից փող, փէ՝ Մարկուց փող:
Մեծամոր 11. 41:
Մեղու 24:
Մեղտի 16. 24. 32. 38. 40. 44. 45. 51. 54. 56:
Միհրան 15. 19–29. 32:
Միհրխոսրով 49:
Մշու բլուր 58:
Մոգուց գերեզման, փէ՝ Մոկկունք:
Մոխրայ երկիր 40:
Մոկկունք կամ Մոգաունք 47:
Մովսէս կաթողիկոս 8:
Մուշ 13. 16. 21. 23. 24. 25. 31. 36. 39. 52:
Մուշեղ Գաջակորով 9. 13–15. 21. 26. 30. 47. 56. 59:
Մօրաց գուռն 23:
Մօրիկ 13–16:
Յեռասանկ 51:
Յոյնք 9. 13–16. 28. 31. 43. 56. 59:

Հաբք 31. 61:
Հեր 15:
Հերակլ կայսր 45. 56. 57. 59:
Հոն 48:
Հոնքնկէց 46. 47:
18. 19. 26. 30. 31. 34. 44. 47–52. 54–56. 58. 59:
Յովհաննէս Ա. Գլակայ առաջնորդ 8:
Յովհաննէս Բ. Գլակայ առաջնորդ 8:
Յովհաննէս Կարապետ 10. 12.
Յովհան Կեսարու հայրապետ 57:
Յովհան մամիկոնեան եպիսկոպոս 63:
Յովհաննէս մի'ի խոտաճարակացն 20:
Յովհան Մանդակունի 8:
Յովսէփ Գլակայ առաջնորդ 8:
Նարգակ 11:
Նարեսոս, փէ՝ Ենարկիոս:
Ներսէս մեծն 62:
Ներսէս Բ. 57. 59. 63:
Ներսէս Գլակայ առաջնորդ 8:
Ներքինանկնիս 55:
Նիխոր 5.
Նիխորձէս 14:
Շահաստան, փէ՝ Բահլ Շահաստան:
Շատախ 16. 57:
Շատախոս, փէ՝ Գորգ:
Շիրականիք 45:
Ողկան 16. 22. 28. 42. 58:
Ողնու բերդ, փէ՝ Եղանց բերդ:
Ողնուտենք, փէ՝ Եղանց բերդ:
Որմիզդ Պարսից արքայ 13. 14:
Ուռհա 59:
Պալունիք 33. 45. 49. 51:
Պարեխ 12. 13:
Պարսք 13. 14. 16. 20. 23. 25. 33. 35–44. 47. 56–59:
Պարսից դէմ կամ կողմ 54:
Պողակ կամ Պողկ, փէ՝ Պուղկ:
Պորպ կամ Պորպէս քաղաք 31. 38. 62:
Պուղկ 55:
Պողնկարպոս մի'ի խոտաճարակացն 16. 20:
Ջախվախք 61:
Ջամբ Խոսրով, փէ՝ Խոսրով Ա.
Ջոջիկ 59. 61:
Ռահան 32–34:
Սագաստան 9:
Սագակ, փէ՝ Նարգակ:
Սալնայ երկիր 40:
Սասուն 13. 16:
Սերեմ, փէ՝ Սրեմ:
Սերեմաձոր, փէ՝ Սրեմաձոր:
Սերեմավայր, փէ՝ Սրեմավայր:
Սիմէոն մի'ի խոտաճարակացն 19:
Սիւնիք 59:
Սմբատ իշխան Հաշտենից 44:
Սմբատ որդի Վահտայ 33–49. 55. 56:
Սուկաւ 9:
Սուրբ Բանակ 61:
Սուրբ Սիոն 60:
Սուրբ Ստեփաննոս եկեղի 52:
Սուրէն եղբայր Վախտանգայ 39. 40:
Ստեփաննոս նախավկայ 5.
Ստեփաննոս որդի Վահանայ մամիկոնենի 58:
Ստեփաննոս որդի Վարդայ սաբրակի 8. 30. 45:
Սրեմ 41:
Սրեմաձոր 42:
Սրեմավայր 47:
Սրոց կամ Սրենց ձոր 41:
Վախտանգ 31. 39. 46:
Վահ 33:
Վահան Մամիկոնեան կամ Կամսարական 16. 26. 28. 31–36. 44–47:
Վահան որդի Վարազայ 49:
Վահանովիտ 43:
Վազարշակերտ 58:
Վայրանկանիս 55:
Վանանդ 59. 61:
Վաչդեան 56–58:
Վաչիր 28:
Վաչտեան, փէ՝ Վաչդեան:
Վարազ իշխան Պալունեաց 39. 42–46. 49:
Վարազաբլուր 44:
Վարազակ 46:
Վարազակաբլուր, փէ՝ Վարազաբլուր:
Վարդ պատրիկ 9:
Վարդուհրի 52–54:

Սահակ Գլակայ առաջնորդ 8։
Սահակ Պարթև 31։
Սահուռ 61։
Սամուէլ հայրապետ 63։
Սանասայ Ծմակ, տե՛ս Ծմակ։
Տայք 58։
Տարօն 13. 15. 16. 21. 31. 38. 39. 46–59. 62։
Տաւրոս 31. 45։
Տիգրան զօրապետ 46–49։
Տիրան 52. 54. 59. 61։
Տրդատ 41. 62։
Վարշիր, տե՛ս Վաշիր։
Վիրք 8. 59–61։
Տաճիկք 61։
Տաճկաստան 61։
Տամբուր 60։
Փադիկաւ, տե՛ս Փանդիկաւ։
Փանդիկ կամ Փանդիկաւ 52. 55։
Փոկաս 16։
Փոյադիկ, տե՛ս Փանդիկ։
Քաղկեդոն 13։
Քարքէ 29. 40։
Օձ քաղաք 23. 61։

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dorotheenstr. 144